

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հեղինակ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ

ԵՐԵՎԱՆ - 2002

## Ներածություն

20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին աշխարհում տեղի ունեցող արմատական, շրջադարձային փոխակերպումները գրավում են հասարակագետների, տնտեսագետների, քաղաքագետների, իրավաբանների, հոգեբանների ուշադրությունը՝ անսպառ նյութ դառնալով փիլիսոփայական վերլուծությունների համար: Առավել ակտիվ ու դրամատիկ են վերափոխումները հետխորհրդային տարածքի երկրներում, որտեղ համակարգային փոփոխությունների հետագա ընթացքը ենթադրում է այդ գործընթացների իմաստավորման, տեսական ընդհանրացման, կանխատեսման ու կարգավորման մեխանիզմների մշակմանն ուղղված հետազոտական ծրագրերի իրականացում:

Քաղաքակրթության զարգացումը տեղի է ունենում հասարակական համակարգերի փոխակերպումների ու կատարելագործման ճանապարհով: Հասարակական համակարգը պատմականորեն ձևավորված հաստատությունների (խմբերի, կառույցների ու կազմակերպությունների) և հարաբերությունների ինքնակարգավորվող, բարդ ու բազմաշերտ ամբողջություն է: Դրա զարգացումներն անմիջականորեն կապված են ինստիտուցիոնալ կառույցների էվոլյուցիայի, ավանդական սոցիալական հաստատությունների արդիականացման ու վերափոխման, նորերի ձևավորման գործընթացների հետ:

Հայաստանում կատարվող արմատական վերափոխումներին բնորոշ իրողությունը ժամանակակից ժողովրդավարական համակարգերի հատուկ հաստատությունների ձևավորման, ինստիտուցիոնալիզացիայի գործընթացն է, որի նպատակն է՝ հասարակական զարգացումներն ու հարաբերությունները դարձնել սոցիալ-կառուցվածքային տեսանկյունից ավելի կարգավորված ու նորմավորված:

Մեր հասարակության մեջ ընթացող համակարգային փոխակերպումների, ժողովրդավարացման գործընթացների նպատակային իրականացման առումով կարևորվում է հասարակական համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ վերլուծությանը, դրա զարգացման միտումների վերհանմանը նվիրված ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է, հաշվի առնելով հայկական

պետականության կայացման, հասարակական համակարգի ներդաշնակ զարգացման և անվտանգության հիմնախնդիրները, նպաստել հասարակական ինստիտուտների զարգացման, կառավարման գործընթացների օպտիմալացման, քաղաքացիական հասարակության արդյունավետ մոնիթինգի մշակմանն ու իրականացմանը, այդ ճանապարհին եղած խոչընդոտների բացահայտմանն ու հաղթահարմանը:

Չետազոտության շրջանակներում քննարկվող խնդիրները դասակարգվել են մի քանի խմբերում:

**Խնդիրների առաջին խումբը** կազմում են հասարակական համակարգի էության, կառուցվածքային և ֆունկցիոնալ վերլուծության, սոցիալական ինստիտուտների ձևավորման առանձնահատկությունների, դրանց գործառնության բացահայտ և ոչ բացահայտ, կառուցողական և ապակառուցողական տեսանկյունների հետ կապված հիմնահարցերը:

**Երկրորդ խմբի** մեջ մտնում են հասարակական համակարգում քաղաքական ինստիտուտների (պետական իշխանության կառույցներ, կուսակցություններ, շահառու խմբեր) դերի ու գործառնության, հայ իրականության մեջ պետական հաստատությունների և քաղաքական կուսակցությունների կարգավիճակի, գործառնության մկարագրի, դրանց զարգացման գործում առկա խոչընդոտների հաղթահարման խնդիրները:

**Երրորդ խումբը** վերաբերում է քաղաքացիական հասարակության ժամանակակից ըմբռումների, ձևավորվածության չափանիշների վերլուծությանը, Հայաստանում այդ կառույցների ձևավորման գործում հաջողությունների և հիմնախնդիրների վերհանմանը, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների համագործակցության՝ հասարակական համակարգի անվտանգության տեսանկյունից արդյունավետ մոնիթինգի հետազոտմանը:

**Խնդիրների չորրորդ խումբը** նվիրված է ժողովրդավարության կայացման գործում քաղաքացիական ակտիվության ու մասնակցության կարևորության, այդ գործընթացները խոչընդոտող հասարակական և քաղաքական իներտության դրոպատճառների ու դրանց հաղթահարման եղանակների վերլուծությանը, հասարակական համակարգի կայունացման և կառավարման գործում տիրապետող գաղափարական, արժեքային համակարգերի, ձևավորված ավանդույթների ու պատկերացումների դերի վերհանմանը:

**Հինգերորդ խումբը** կազմում է հասարակական, քաղաքական երկխոսությունների ոլորտին բնորոշ ինստիտուցիոնալ կառույցների, ժողովուրդ-իշխանություններ երկխոսության առանձնահատկությունների, դրա արդյունավետության բարձրացման մեխանիզմների ու ավանդույթների ձևավորման, այդ գործում եղած բացթողումների ու սխալների վերհանման, արդյունավետ հաղորդակցման ու բանակցությունների տեխնոլոգիաների ուսումնասիրության և համապատասխան մշակույթի զարգացման հիմնախնդիրները:

Չետազոտության արդյունքներն օգտակար կարող են լինել հասարակության զարգացման և կառավարման հարցերով զբաղվող մասնագետների, քաղաքագետների, հասարակագետների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, պետական կառավարման օղակների ներկայացուցիչների համար:

# 1. Հասարակական համակարգ. կառուցվածքային եւ ֆունկցիոնալ բնութագիրը

- Հասարակական համակարգի էությունը և տիպաբանությունը
- Սոցիալական ինստիտուտներ: Ինստիտուցիոնալիզացիա և ինստիտուցիոնալ ճգնաժամ
- Ֆունկցիա և դիսֆունկցիա: Բացահայտ և ոչ բացահայտ ֆունկցիաներ

Հասարակությունը բնապատմական պրոցեսի ընթացքում մարդկանց համատեղ գործունեության հենքի վրա ձևավորված հարաբերականորեն կայուն կապերի ու հարաբերությունների համակարգ է, որն ուղղված է նյութական ու հոգևոր պահանջները բավարարմանը, գոյության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների վերարտադրությանը<sup>1</sup>: Ուստի միանգամայն արդարացված է հասարակությունը որպես կառուցվածքային - ֆունկցիոնալ համակարգ դիտարկելու սկզբունքը:

**Համակարգը** շաղկապված և փոխգործառնող տարրերի այն խումբն է, որը շրջապատի հետ հարաբերություններում հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն: Ըստ տարրերի միջև կապի բնույթի, ընդունված է առանձնացնել գումարային և ամբողջական համակարգերը: Վերջիններս էլ իրենց հերթին բաժանվում են օրգանական և ոչ օրգանական տիպերի: Ըստ արտաքին միջավայրի հետ կապերի բնույթի, տարբերում են բաց և փակ համակարգեր և այլն:

Բաց է այն համակարգը, որի համար շրջապատող միջավայրի հետ ակտիվ փոխներգործությունն ու կապերը հանդիսանում են կենսագործունեության ձև և պայման: Բաց համակարգը ոչ միայն ունակ է որոշակի փոփոխություններ առաջ բերել շրջապատող միջավայրում, այլև ի վիճակի է որոշակի պայմաններում ինտեգրել և սեփական գործառնության մեջ ներառել սեփական համակարգի ծնունդ չհանդիսացող տարրեր:

Փակ է այն համակարգը, որն ունի ինքնաբավ բնույթ, շրջապատի հետ

<sup>1</sup> Социологический энциклопедический словарь. Ред. координатор Г. В. Осипов. М., 1998, 212.

հարաբերություններում ներկայանում է հարաբերականորեն մեկուսացված: Փակ համակարգի կառուցվածքում արտաքին տարրի ավելացման դեպքում կարելի է խախտել դրա կառուցվածքային - ֆունկցիոնալ ամբողջականությունը: Որպես տիպիկ օրինակ կարելի է դիտարկել Խորհրդային Միության քայքայումը: Այդ իրողությունը, զարգացման ներքին խնդրոտներից զատ, մասնագետները բացատրում են նաև տվյալ սոցիալական համակարգին խորթ ինստիտուտների ու տարրերի (բազմակուսակցություն, հրապարակայնություն, մասնավոր սեփականություն, այլընտրանքային ընտրություններ) ներմուծմամբ, որի հետևանքով խորհրդային հասարակության համակարգաստեղծ գործոնը՝ գաղափարախոսությունը, կորցրեց իր երբեմնի կենտրոնաձիգ ուժը<sup>2</sup>:

Համակարգային վերլուծության ընթացքում կարևոր նշանակություն է ստանում *«կառուցվածք»* հասկացությունը: Դրա տակ հասկացվում է համակարգի տարրերի միջև կայուն կապերի և հարաբերությունների ամբողջությունը, որոնք պայմանավորում են համակարգի որակական ինքնատիպությունը:

*Սոցիալական կառուցվածքը ենթադրում է.*

- հասարակության տարրերի միջև կայուն կապեր և փոխադարձ կախվածություններ;
- փոխազդեցությունների պարբերականություն և կրկնողականություն;
- տարրերի բազմամակարդակ հիերարխիա՝ ըստ դրանց նշանակության;
- ենթահամակարգերի ու տարրերի նկատմամբ կարգավորող, ուղղորդող դինամիկ վերահսկողություն:

Սոցիոլոգիական գիտության հիմնադիր Օգյուստ Կոնտը հասարակությունը դիտարկում է որպես աշխատանքի բաժանման և համերաշխության վրա հիմնված ֆունկցիոնալ համակարգ, որի կառուցվածքային տարրերն են ընտանիքը, դասերը և պետությունը<sup>3</sup>:

ժամանակակից հետազոտողներն առանձնացնում են այլ համակար-

<sup>2</sup> Տես՝ Հարությունյան Էդ. Ա., Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000, էջ 24-25:

<sup>3</sup> Տես՝ XIX-XX-րդ դարասկզբի բուրժուական սոցիոլոգիայի պատմություն: Խմբ.՝ Կոն Ի. Ա., Օսիպով Ե. Վ. և ուրիշներ, Երևան 1986, էջ 37-41; Armand P. Sociologie de Conte. Paris, 1969, p. 429-430:

գաստեղծ գործոններ ևս, կառուցվածքային մակրո և միկրո մակարդակները, սակայն հասարակությունը որպես մեկ միասնական բարդ ամբողջություն դիտարկելու մեթոդաբանական սկզբունքը ընդհանուր է նրանց մեծամասնության համար:

Հասարակական կյանքի համակարգային - կառուցվածքային վերլուծության շրջանակներում իբրև կենտրոնական գործոն անհրաժեշտ է դիտարկել սոցիալական ինստիտուտ հասկացությունը: Վերջիններս, որպես հասարակական կառուցվածքի գլխավոր բաղադրատարր, ինտեգրում և կոորդինացնում են անհատական գործողությունների բազմությունը, կարգավորում հասարակական հարաբերություններն ու գործընթացները՝ հանրային կյանքի տարբեր բնագավառներում:

Փիլիսոփայական մարդաբանության հիմնադիրներից մեկը՝ գերմանացի սոցիոլոգ Ա.Գելենը, ինստիտուտը մեկնաբանում է որպես կարգավորող հաստատություն, որը մարդկանց գործողությունները մղում է որոշակի հունով: Ինստիտուտներն ապահովում են մարդկանց վարքագծի կարգավորվածությունը, դրդում նրանց գնալ «տրորված» ճանապարհով, որը հասարակությունը համարում է ցանկալի<sup>4</sup>:

Այլ հեղինակներ էլ ինստիտուտը հասկանում են իբրև վարքագծի նորմերի և եղանակների ամբողջություն, որպես օրենքների, ավանդույթների, հավատալիքների, դիրքորոշումների բարդ հավաքածու, որոնք ունեն որոշակի նպատակ և իրականացնում են հասարակայնորեն կարևոր որոշակի գործառույթներ<sup>5</sup>:

Ա.Կրավչենկոն, վերլուծելով սոցիալական ինստիտուտը որպես դերային համակարգ, նորմերի և ստատուսների, սովորույթների, ավանդույթների ու վարքականոնների ամբողջություն, սոցիալական կազմակերպությունների և գործողությունների համալիր, դրա կարգավորիչ-ուղղորդող նշանակությունը համեմատում է կենդանական աշխարհում բնազդների դերի հետ: Սոցիալական ինստիտուտները կենդանական աշխարհում գործող բնազդների պես օգնում են գոյատևել և զարգանալ թե՛ առանձին անհատին և թե՛ ամբողջ հասարակությանը: Սոցիալական ինստիտուտներ-

<sup>4</sup> Ըստ Бергер П. Л. Приглашение в социологию: гуманистическая перспектива. Перевод с англ. Под ред. Г. С. Батыгина. М., 1996, էջ 85:

<sup>5</sup> Bernard J., Tompson L. F. Sociology. Nurses and their patients in a modern society. Saint Louis: The C. V. Mosby Co., 1970, էջ 125:

ընդ երևան են եկել մշակույթի և քաղաքակրթության հետ միասին և կատարում են համանման ֆունկցիաներ՝ օգնելով մարդկությանը հարմարվել շրջապատին<sup>6</sup>:

Նկատի ունենալով հասարակական ինստիտուտ հասկացության լայն ընդգրկումները և ընդհանրացնելով դրա վերաբերյալ տարբեր տեսակետներն ու մեկնաբանությունները, կարելի է առաջարկել հետևյալ ձևակերպումը. *հասարակական ինստիտուտները հանրային կյանքի կազմակերպման և կառավարման հարաբերականորեն կայուն մեխանիզմներն ու եղանակներն են, որոնք ապահովում են հասարակական կապերի ու հարաբերությունների կարգավորվածությունը և ուղղորդվածությունը*:

Սոցիալական ինստիտուտներին բնորոշ տարրերի շարքում առանձնացնում են նպատակների և խնդիրների ամբողջությունը, վարքի և գործունեության օրինակելի մոդելներն ու սկզբունքները, ուսիլիտար մշակույթային գործոնները (շենք, նյութական միջոցներ), սիմվոլիկ մշակութային գործոնները (գինանշան, դրոշ, կնիք և այլն), նորմերի, օրենքների, երաշխավորությունների գրավոր և բանավոր կողքերը:

Ըստ հասարակական կյանքում ունեցած դերի ու նշանակության, ինստիտուտները բաժանվում են երկու խմբի՝ գլխավոր (առանցքային, հիմնական) և երկրորդական (ոչ հիմնական, ածանցյալ, ենթակառուցվածքային):

Սոցիոլոգները հակված են գլխավոր ինստիտուտների շարքը դասել 5-6 հիմնական կառույցներ. ընտանիքը, քաղաքական, տնտեսական, կրթական, կրոնական հաստատությունները: Որոշ հետազոտողներ էլ, նկատի ունենալով հասարակական կյանքում գիտական գործունեության և արժեքների աճող կարևորությունը, հիմնական ինստիտուտների շարքն են դասում նաև գիտությունը<sup>7</sup>: Երկրորդական ինստիտուտները թաքնված են գլխավորների կազմում, ածանցյալ են դրանցից՝ որպես ավելի փոքր կառույցներ<sup>8</sup>: Երկրորդական ինստիտուտները կոչվում են նաև *սոցիալական պրակտիկաներ, արարողակարգային սկզբունքներ, սովորույթներ, մե-*

<sup>6</sup> Տես. Кравченко А. И. Социология. М., 2001, էջ 186:

<sup>7</sup> Տես՝ Фролов С. С. Социология. учебник 3-е изд. М., Гардарики, 2000, էջ 145:

<sup>8</sup> Օրինակ, տնտեսական ինստիտուտները իրենց գործառնության համար կարիք ունեն տարադրամի փոխանակման, վարկավորման, մասնավոր սեփականության պաշտպանվածության, աշխատավարձի վճարման, շուկայի ուսումնասիրության և այլն:

*խանդաներ:* Երբեմն նույնանուն սոցիալական ինստիտուտները (օր. ընտանիք, կրթություն) տարբեր մշակութային համակարգերում դրսևորվում և գործառնում են տարբեր սովորույթների, սոցիալական պրակտիկաների և մեխանիզմների միջոցով:

Կախված գործունեության ոլորտից և գործառնություններից, սոցիալական ինստիտուտները լինում են *ռեյալիզմ* (որոնք սահմանում են հասարակության դերային կառուցվածքը հարաբերությունների համակարգում), *ռեգուլյատիվ* (այստեղ են մտնում նաև սոցիալական վերահսկողության մեխանիզմները), *մշակութային* (կապված գաղափարախոսության, գիտության, կրոնի ու արվեստի հետ), *ինտեգրատիվ* (կապված հասարակական շահերի միավորման և համակարգված ներկայացման հետ):

*Հասարակական համակարգի զարգացումը հանգում է սոցիալական ինստիտուտների էվոլյուցիային, տեղի է ունենում ավանդական ինստիտուտների արդիականացման և վերափոխման, նորերի ձևավորման և ինստիտուցիոնալիզացիայի ճանապարհով:*

*Ինստիտուցիոնալիզացիան* սոցիալական նորմերի, կանոնների, դերերի ու կարգավիճակների սահմանման ու ամրագրման, դրանց համակարգման գործընթաց է, որն ուղղված է հասարակական որոշակի պահանջներին բավարարմանը: Ինստիտուցիոնալիզացիայի հետևանքով հասարակական գործունեության սպոնտան ձևերը, վերափոխումներն ու շարժումները դառնում են սոցիալ-կառուցվածքային տեսանկյունից ավելի կարգավորված և նորմավորված:

Նոր ինստիտուտների ձևավորման գործընթացում կարելի է առանձնացնել երկու տեսանկյուններ.

1) *ինստիտուտի կառուցվածքային-նորմատիվ ձևավորվածությունը* (երբ լուծված են դրա գործունեության համար անհրաժեշտ կառուցվածքային օղակների ստեղծման, նյութական և ֆինանսական, օրենսդրական դաշտին վերաբերող խնդիրները) և

2) *ինստիտուտի ֆունկցիոնալ կայացվածությունը, դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքային մեխանիզմների լիարժեք գործառնությունը հասարակական համակարգում:*

Ներդաշնակ, աստիճանական զարգացումներ ապրող հասարակության մեջ սոցիալական ինստիտուտի այս երկու կողմերի ձևավորումն ու զարգացումը սովորաբար տեղի է ունենում գուցահեռաբար: Սակայն ար-

մատական, շրջադարձային փոփոխությունների դեպքում ինստիտուտի կառուցվածքային և ֆունկցիոնալ բնութագրիչների ձևավորումը կարող է լինել նաև ոչ սինխրոն, «առաջանցիկ»:

Որոշ հեղինակներ առաջարկում են սոցիոլոգիայում շրջանառության մեջ դնել նորմերի *ինստիտուցիոնալացում* (instituting a set of norms) և *ինստիտուցիոնալիզացում* (institutionalisierung) տերմինները<sup>9</sup>: Նորմերի ինստիտուցիոնալացումը հասկացվում է որպես օրենսդիր օրգանի կամ այլ իրավասու կազմակերպության կողմից դրանց ձևական ընդունում - հռչակում, անկախ նրանից, թե նորմերին ինչպես է վերաբերում հասարակության մնացած մասը: Նորմերն *ինստիտուցիոնալիզացված* չեն, քանի դեռ դրանց հետ համաձայն չի հասարակության մեծամասնությունը, քանի դեռ դրանք չեն համարվում անհրաժեշտ և ինքնըստինքյան ենթադրվող, ընդհանուրի կողմից ընդունելի սկզբունքներ:

Ինստիտուցիոնալիզացման կառուցողական գործընթացների հակառակ իրողությունը *ինստիտուցիոնալ ճգնաժամն է*, որն ուղեկցվում է տվյալ ինստիտուտի հեղինակության և դրա նկատմամբ վստահության անկմամբ: Գնաժամը բնութագրվում է տվյալ ինստիտուտի՝ իր ֆունկցիաները լիարժեք կատարելու անկարողությամբ: Այդ պատճառով տեղի է ունենում մի ինստիտուտի ֆունկցիաների վերաբաշխում այլ ինստիտուտների վրա<sup>10</sup>:

Քաղաքական ինստիտուտների և իշխանության կառույցների ճգնաժամը կապված է հասարակական կառավարման բնագավառում իրենց առաքելության ոչ արդյունավետ իրականացման հետ և դրսևորվում է բնակչության շրջանում դրանց նկատմամբ վստահության անկմամբ: Ձևավորվում են երկու հիմնական միտումներ. լայն խավերին բնորոշ քաղաքական իներտություն, քաղաքական կյանքից օտարվածություն և քաղաքական կառույցների՝ քաղաքացիներին իրենց կողմը գրավելու ոչ ժողովրդավարական մեթոդներին (ընտրակաշառք, վարչական ռեսուրսների և միջոցների կիրառում) դիմելու գործելակերպի աճ:

Նոր ինստիտուտների ձևավորման և ինստիտուցիոնալ ճգնաժամի

<sup>9</sup> Տե՛ս՝ Кравченко А. И. Социология: учебник. М., 2001, із 189-190:

<sup>10</sup> Երբ 1970-80-ական թթ. ԽՍՀՄ հանրակրթական համակարգը չէր բավարարում բուհ ընդունվելու պահանջները, երևան եկավ դասուսույցների ինստիտուտը:

երևույթները հասարակական համակարգի զարգացման ու վերափոխման գործընթացների անխուսափելի իրողություններ են: Առանց ճգնաժամերի և դրանց հաղթահարման, դժվար է պատկերացնել ինստիտուտների զարգացումն ու հասարակական առաջընթացը:

Վերջին տասնամյակների փորձը վկայում է, որ փոխակերպվող հասարակության մեջ պարբերաբար աճում է իշխանության ինստիտուտների և քաղաքական կուսակցությունների նկատմամբ անվստահությունը: Գոնաժամը, սակայն, վեր հանելով ինստիտուտի գործառնության մեջ եղած խոչընդոտները, օգնում է նաև մեթոդապես հիմնավորված գործունեության դեպքում վերացնել դրանք՝ կատարելագործելով հասարակական համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ նկարագիրը: Դա իր հերթին ենթադրում է տեսական և կիրառական ուսումնասիրությունների վրա հիմնված հետազոտական ծրագրերի իրականացում:

Հասարակական համակարգում ինստիտուցիոնալ կառույցների ֆունկցիաները բաժանվում են ընդհանուր և մասնավոր ֆունկցիաների: Առաջիններն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր սոցիալական ինստիտուտներին: Դրանց շարքում առանձնացնում են.

- հասարակական հարաբերությունների ամրապնդման և վերարտադրության ֆունկցիան;
- շահերի ինտեգրման և դրանց բավարարման;
- կարգավորող-վերահսկիչ;
- հասարակական գործընթացներում ներգրավման և սոցիալիզացիայի;
- հաղորդակցական և փոխանցող (հասարակական փորձի փոխանցման, սերնդափոխության հետ կապված) և այլ գործառույթներ<sup>11</sup>:

Մասնավոր ֆունկցիաները բնորոշ են որոշ ինստիտուտներին և հատուկ չեն մյուսներին (օրինակ, իրավական կարգուկանոնի հաստատումը հատուկ է պետությանը, մարդկանց վերարտադրության ֆունկցիան բնորոշ է ամուսնության և ընտանիքի ինստիտուտին և այլն): Ընդ որում, միևնույն ինստիտուտը կարող է կատարել մի շարք ֆունկցիաներ և մի քանի ինստիտուտներ կարող են իրականացնել նույնանման ֆունկցիաներ:

Երբեմն ինստիտուտը հասարակական համակարգում իր կառուցողական, դրական նշանակությունից բացի ունենում է նաև բացասական նշանակություն՝ խոչընդոտելով զարգացման գործընթացները: Այդպիսի գոր-

ծունեությունը կոչվում է *դիսֆունկցիա*:

Եթե քաղաքական ինստիտուտները չեն կատարում հանրային շահերի բավարարման իրենց առաքելությունը, երբ գերակայող են դառնում կառավարման օլիգարխիկ մեթոդները և առանձին խմբիշխանների շահերի բավարարման միտումը, ֆունկցիան վերածվում է դիսֆունկցիայի: Վերջինիս աճը կարող է հանգեցնել քաղաքական և հասարակական կառույցների կազմալուծման:

Հասարակական համակարգի զարգացման առանձնահատկությունների վերլուծությունը ենթադրում է նաև ինստիտուտների *ակնհայտ* (բացահայտ, պաշտոնապես հայտարարված և հանրության կողմից ճանաչված) և *լատենտ* (ոչ բացահայտ, թաքնված, չհայտարարված) ֆունկցիաների տարբերակում և հետազոտություն<sup>12</sup>:

Լատենտ ֆունկցիաները կարող են լինել ինչպես մարդկանց կողմից գիտակցված և կանխատեսված, այնպես էլ՝ չգիտակցված ու անսպասելի: Դրանք ածանցյալ են ինստիտուտի հիմնական գործունեությունից և կարող են ունենալ թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Հասարակական համակարգի վերլուծության ընթացքում, ինչպես նաև դրա զարգացման նպատակով քաղաքականություն մշակելիս և գործնական ծրագրեր իրականացնելիս տվյալ համակարգի անվտանգության շահերը թելադրում են համակողմանիորեն վերլուծել նոր ձևավորվող ինստիտուտի ոչ միայն ֆունկցիաներն ու դրանց անխափան իրականացման հնարավորությունները, այլև հնարավոր դիսֆունկցիաների խնդիրը, հաշվի առնել ոչ միայն դրա բացահայտ, այլև լատենտ գործառույթների հավանականությունն ու բնույթը՝ առաջին հերթին սոցիալական տվյալ համակարգի այլ բաղադրիչների՝ ազգային, մշակութային, ավանդույթային, արժեքային պրակտիկաների հետ կապի ու հարաբերակցության տեսանկյունից:

1995թ. Պեկինում կայացած կանանց հիմնախնդիրներին նվիրված ՄԱԿ-ի խորհրդաժողովի բանաձևերում զարգացող և հետխորհրդային երկրների համար կանանց դրության բարելավման մեխանիզմների շարքում

<sup>11</sup> Տե՛ս Փրոլով Ս. Ս. Социология. М., 2000, էջ 153-155:  
<sup>12</sup> Այդ հայեցակարգը մշակել է ամերիկացի սոցիոլոգ Ռոբերտ Մերտոնը: Տե՛ս Мертон Р. Явные и латентные функции. Американская социологическая мысль. Тексты. М., 1994, էջ 379-447:

երաշխավորվում է նաև սոցիալական ապաստարանների, կամ «այլընտրանքային բնակարանների» գաղափարը<sup>13</sup>: Նշվում է նաև, որ ինստիտուցիոնալ այդ կառույցներն իրենց դրական են դրսևորել Մեծ Բրիտանիայում և Արևմտյան Եվրոպայի այլ երկրներում: Ինչ խոսք, այդ երկրներում ներդրումներ են կոնֆլիկտներից տուժած կանանց համար «այլընտրանքային բնակարանի» ինստիտուտը զուգեև միանգամայն անհրաժեշտ է և օգտակար: Սակայն, դժվար չէ նկատել, որ հայ իրականության մեջ, որտեղ մեծ դեր են խաղում ազգակցական, բարեկամական սերտ կապերը, հասարակական կարծիքը, համապատասխան ավանդույթներն ու պատկերացումները, սոցիալական ապաստարանները կանանց համար կարող են նաև հակառակ հետևանքն ունենալ՝ խաթարելով ներդրումներ կապերն ու նպաստելով դրանց քայքայմանը:

Կարևոր է համապատասխան նյութական և մասնագիտական ռեսուրսները Հայաստանում ուղղել, օրինակ, ճգնաժամային կենտրոնների հիմնմանը, որոնք օգնություն ցույց կտան հոգեկան և ֆիզիկական բռնության ենթարկված փախստականներին, հարազատներին կորցրած, հաշմանդամ երեխաներ ունեցող կանանց, միայնակ մայրերին ու թոշակառուներին, սոցիալական անբարենպաստ պայմանների բերումով սահմանային իրավիճակներում հայտնված կանանց:

Հասարակական համակարգի զարգացման ու նոր ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման գործում կարևոր է առաջավոր փորձի յուրացումը, սակայն կարևոր է ոչ թե այդ փորձի պարզ կրկնօրինակումը, այլ դրա մեթոդական զինանոցի կոնկրետ կիրառումը տվյալ հասարակական համակարգի տեղական, ազգային առանձնահատկություններին ու հիմնախնդիրներին համապատասխան: Միայն այդպիսի մոտեցման դեպքում կարելի է խուսափել հանրային կառավարման «հինգերորդ անիվ» ունենալու գայթակղությունից և ապահովել հասարակական համակարգի անվտանգությունն ու ներդաշնակ զարգացումը:

Փոխակերպվող հասարակությունը ճգնաժամային իրավիճակներից նվազագույն կորուստներով կարող է դուրս գալ, եթե հաջողվի պահպանել դրա տարրերի համախմբվածությունն ու օրգանական ներդաշնակությունը, վերափոխումների ընթացքում ցուցաբերել համալիր, համակարգային մոտեցում:

<sup>13</sup> Sui «Женщины в переходный период. Региональный мониторинговый доклад. Регион: Центральная и Восточная Европа и страны СНГ. 6, Флоренция, Италия. UNICEF, 1999, էջ 87-88:

## 2. Քաղաքական իշխանության կառույցներն ու կուսակցությունները հասարակական համակարգում

- Քաղաքական համակարգի տարրերը և գործառույթները
- Պետության և քաղաքական ինստիտուտների վերաբերյալ առօրյա ընկալումները
- Կուսակցություններ. ձևավորման գործընթացներ և հիմնախնդիրներ

Հասարակության քաղաքական համակարգը պետական հաստատությունների, քաղաքական կուսակցությունների և շահառու խմբերի ամբողջություն է, որոնց շրջանակներում տեղի է ունենում քաղաքական կյանքն ու կառավարումը, իրականացվում պետական իշխանությունը: Քաղաքական համակարգի բարդ կառուցվածքում կարելի է առանձնացնել տարրերի չորս խումբ.

- քաղաքական ինստիտուտներ և շահառու խմբեր (պետական իշխանության մարմիններ, կուսակցություններ, հասարակական շարժումներ);
  - քաղաքական հարաբերություններ (ազգամիջյան, միջազգային, միակողմանի քաղաքական, երբ կողմերից մեկն է քաղաքական կազմակերպություն կամ երկկողմանի);
  - քաղաքականության նորմեր և սկզբունքներ;
  - քաղաքական գիտակցություն և մշակույթ:
- Քաղաքական համակարգի գործառույթներում կարելի է առանձնացնել երկու խումբ.*

*«Մուտքի» գործառույթներ - քաղաքական սոցիալիզացիա և հավաքագրում, քաղաքական հաղորդակցում, շահերի ինտեգրում և արտաբերում:*

*«Ելքի» գործառույթներ, որոնք համընկնում են քաղաքական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի հետ. կանոնաստեղծ, օրենքների և իրավական դաշտի ձևավորման ու կարգավորման գործառույթ; կանոնների և նորմերի գործադրման ու կիրառման; կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ հսկողության գործառույթներ:*

*Քաղաքական համակարգի կենտրոնական ինստիտուտը պետությունն*



է: Այդ առանցքի շուրջն է ձևավորվում քաղաքական գործունեության ամբողջ բովանդակությունը:

Լայն իմաստով պետությունը հանդես է գալիս որպես հոմանիշ՝ երկիր, քաղաքականապես կազմակերպված ժողովուրդ հասկացությունների: Նեղ իմաստով, սակայն, *պետությունը մեկնաբանվում է որպես որոշակի տարածքում գերագույն իշխանություն ունեցող կազմակերպություն, հաստատությունների համակարգ*: Դրա գործունեությունը տեղի է ունենում և այն անհրաժեշտ է քննարկել այլ հասարակական և քաղաքական կազմակերպությունների, շահառու խմբերի հետ սերտ կապի ու փոխազդեցության շրջանակներում:

Մասնագիտական գրականության մեջ քաղաքական կուսակցությունների տիպաբանության վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Առանձնացվում են *արիստոկրատական-կարիերիստական կուսակցությունները; ակումբատիպ կուսակցությունները*, որոնք ունեն էլիտար բնույթ և առանձնակի ակտիվություն են դրսևորում, զանգվածային գործունեության դիմում միայն ընտրություններից ընտրություն; *զանգվածային կուսակցություններ*, որոնք պատմական թատերաբեմում երևան եկան 19-րդ դարի կեսերից, կապված եվրոպայում տեղի ունեցող զանգվածային շարժումների ու գործընթացների հետ:

Մեկ այլ մոտեցմամբ առանձնացնում են *դոկտրինային* (որոնց համար առաջնային է գաղափարական մաքրության պահպանումը), պրագմատիկ (որոնք առաջնորդվում են գործողությունների պրակտիկ, իրավիճակային նպատակահարմարությամբ) և *խարիզմատիկ* (որտեղ մարդիկ համախմբվում են լիդերների շուրջ) կուսակցությունները:

Բավական տարածված է ֆրանսիացի քաղաքագետ Մորիս Դյուվերժեի դասակարգումը, որը, նկատի ունենալով կուսակցությանն անդամակցելու հիմքերն ու պայմանները, տարբերակում է դրանց *կադրային, զանգվածային և կենտրոնացված* տիպերը<sup>14</sup>:

**Կադրային կուսակցությունները** ձևավորվում են քաղաքական գործիչների, լիդերների շուրջ, որպես կանոն՝ վերևից, տարբեր պառլամենտական խմբակցությունների, ճնշման խմբերի, կուսակցական բյուրոկրատիայի բազայի հիման վրա: Դրանք կողմնորոշված են նախևառաջ պրոֆե-

<sup>14</sup> Ըստ Пугачев В. П., Соловьев А. И., Введение в политологию. М., 1998, էջ 283:

սիոնալ քաղաքական գործիչների և ընտրախավի մասնակցության վրա, ինչը ենթադրում է ազատ անդամակցություն և կուսակցական կազմակերպության որոշակի ամորֆություն: Սովորաբար այդ կուսակցությունները ակտիվանում են ընտրությունների ընթացքում, երբ անհրաժեշտ է ապահովել ընտրազանգվածի աջակցությունը սեփական գործողություններին:

Ջանգվածային կուսակցությունները լավ կազմակերպված, կենտրոնածիգ կառույցներ են՝ կանոնադրական անդամակցությամբ: Այդպիսի կառույցներում մեծ նշանակություն է տրվում հայացքների ընդհանրությանն ու անդամների գաղափարական միասնությանը: Առավել հաճախ դրանք ձևավորվում են ներքևից, ոչ հազվադեպ՝ հասարակական շարժումների, արհմիությունների հիման վրա:

**Կենտրոնացված կուսակցություններին** բնորոշ է գաղափարական տարրի վերածումը հիմնարար, կազմակերպությունը ամբողջացնող գործոնի (այդպիսիք են կոմունիստական, ազգայնական կուսակցությունները): Դրանց հատուկ է խիստ կարգապահությունը, կազմակերպվածությունը, քաղաքական առաջնորդների նկատմամբ անքննադատական կեցվածքն ու պաշտամունքը:

Կուսակցություններն իրականացնում են «մուտքի» և «ելքի» մի շարք գործառույթներ.

- հասարակական շահերի միավորում և արտահայտում;
- նոր անդամների հավաքագրում և քաղաքական սոցիալիզացիա;
- լիդերների առաջադրում;
- մասնակցություն քաղաքական կառավարմանն ու իշխանությունների ձևավորմանը;
- հասարակական կարծիքի ձևավորում և մշակում;
- ժողովուրդ - իշխանություններ կապի ապահովում:

Քաղաքական համակարգում կարևոր դեր են խաղում նաև *շահառու խմբերը*, որոնք կուսակցություններից տարբերվում են իրենց նպատակներով, գործունեության մեթոդներով և իշխանության վրա ներգործելու ռեսուրսներով: Դրանք քաղաքացիների կողմից գլխավորապես կամավորության սկզբունքով ձևավորված միություններ են՝ արտահայտելու և պաշտպանելու համար իրենց շահերը պետության և այլ քաղաքական ինստիտուտների հետ հարաբերությունների ընթացքում:

Ըստ ծագման և կազմակերպվածության աստճանի, առանձնացվում են ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ շահառու խմբերը: Վերջիններս այս կամ այն իրադարձության նկատմամբ ինքնաբերաբար ռեակցիայի պատճառով տարերայնորեն առաջացող միավորումներն են, որտեղ բացակայում են մշտապես կազմակերպված գործողությունները, կանոնակարգված հարաբերությունները (օր., ամբոխ, ցուցարարների խումբ և այլն): Ինստիտուցիոնալ խմբերը հստակ կազմակերպական կառուցվածք ունեցող ֆորմալ կառույցներ են՝ որոշակի գործառույթներով ու կադրային (դերային) ապարատով:

Շահառու խմբերը, լինելով ժողովուրդ-իշխանություններ կապի միջնորդ օղակներ, ներկայացնում են հասարակական որոշակի խմբերի սոցիալ-տնտեսական, ազգային, մշակութային, ռեզիոնալ շահերը: Մասնակցելով այդ խմբերի գործունեությանը՝ քաղաքացիները կատարում են առաջին քայլը սոցիալական ակտիվությունից դեպի քաղաքական ակտիվություն տանող ճանապարհին: Որքան լայն է շահառու խմբերի հետաքրքրությունների շրջանակը, այնքան բազմակողմանի են հասարակության և պետության միջև եղած կապերը: Որքան արդյունավետ է դրանց գործառույթների իրականացումը, այնքան ավելի ճկուն է իշխանության կառույցների արձագանքը բնակչության պահանջներին:

Շահառու խմբերն իրենց գործունեության ընթացքում իրականացնում են ուղղակի ճնշումներ իշխանությունների վրա, սակայն շատ ավելի քիչ են նպաստում հակառակ կապի իրականացմանը: Ուստի, իրենց նպատակների իրագործման միջոցները շահառու խմբերի համար զգալիորեն ավելի նեղ են, քան քաղաքական կուսակցությունների դեպքում<sup>15</sup>:

Գործառույթները, որոնք շահառու խմբերը կատարում են հասարակության քաղաքական կյանքում, կարելի է բաժանել մի քանի խմբերի.

- *Շահերի արտիկուլյացիայի*, այսինքն սոցիալական հույզերի ու սպասումների, անբավարարվածության կամ համերաշխության զգացմունքների՝ քաղաքական պահանջների փոխակերպման ֆունկցիա: Իշխանությունների առջև դնելով չհամակարգված պահանջմունքներ, շահառու

<sup>15</sup> Հարկ է նկատել, որ բացի հայրենական շահառու խմբերից, պետության օրենսդիր և գործադիր իշխանության օղակներին կից կարող են գործել նաև շահառու խմբեր (կամ դրանց ներկայացուցչություններ), որոնք ներկայացնում են արտասահմանյան երկրների, համաշխարհային ֆինանսական և տնտեսական կառույցների շահերը:

խմբերը, թվում է՝ բարդացնում, սակայն, ըստ էության նպաստում են որոշումների ընդունման գործընթացների օպտիմալացմանը:

- *Շահերի ագրեգացիայի գործառույթը* կապված է մասնավոր պահանջմունքների ինտեգրման ու համաձայնեցման, դրանց միջև որոշակի հիերարխիայի հաստատման հետ, որը ենթադրում է քաղաքական պահանջմունքների միջև առաջնայնությունների հստակեցումներ և որոշակի շեշտադրումներ:

- *Տեղեկատվական գործառույթ*. շահառու խմբերը իշխանության օղակներին տեղեկացնում և դրանց ուշադրությունն են հրավիրում հասարակական կյանքի տարբեր հիմնախնդիրների վրա՝ պետական կառույցների գործունեությունը դարձնելով ավելի նպատակային և ուղղորդված:

- Որոշակի մասնակցություն ունենալով իշխանության օղակներում տարվող կադրային քաղաքականության խնդիրներին, շահառու խմբերը մասնակցում են նաև քաղաքական էլիտայի և իշխանության կառույցների ձևավորման գործընթացներին<sup>16</sup>:

Անկախության հռչակումից 1991թ. անցել է տասը տարի, և Հայաստանի երրորդ հանրապետության պետական իշխանության կառույցներն ու քաղաքական համակարգի մյուս ինստիտուտները *կառուցվածքային-նորմատիվ* (իրավական դաշտի, դերերի ու հարաբերությունների սահմանման) տեսանկյունից կարելի է համարել կայացած, իսկ ժողովրդավարության իրականացման պոտենցիալի առումով բավարար ու արժեքավոր մոդելի տարրեր: Սակայն նույնը չի կարելի պնդել քաղաքական համակարգի ինստիտուտների *ֆունկցիոնալ կայացման, ենթակառուցվածքային մեխանիզմների և միջինստիտուցիոնալ կապերի ու հարաբերությունների տեսանկյունից*: Այդ առումով թե՛ քաղաքական իշխանության կառույցները և թե՛ կուսակցությունները դեռ ճանապարհ ունեն անցնելու:

Պետական իշխանության հաստատությունների վերաբերյալ հասա-

<sup>16</sup> Երբ աճում է ագրեգացվող շահերի ծավալը կամ շահառու խումբը սկսում է իր գործունեությունը կառուցել առավել ընդհանուր, հայեցակարգային հենքի վրա, ապա նա աստիճանաբար կարող է իր վրա վերցնել քաղաքական կուսակցության ֆունկցիաներ, հետզհետե փոխակերպելով նաև իր կառուցվածքը: (Տես՝ Пугачев В. П., Соловьев А. И., Введение в политологию. М., 1998, էջ 272-274):

րակական կարծիքի մերօրյա ընկալումներում առանձնանում են պատմամշակութային արմատներ ունեցող ծայրահեղ մոտեցումներ ու կարծրատիպեր. *հնազանդվողական-հարմարվողական* և *մերժողական-խուսափողական* տրամադրություններ:

Առաջինը, թերևս, գալիս է հին ավանդական դիրքորոշումից, թե պետությունը աստվածային կամքն իրականացնող կառույց է և պետք է հնազանդվել ու հարմարվել իշխանություններին:

Երկրորդ և առավել հաճախ հանդիպող տրամադրությունները մասամբ պայմանավորված են պետության՝ որպես շահագործման մեխանիզմի մասին մարքսիստական մեկնաբանություններով, իսկ ավելի շատ, թերևս դարեր շարունակ սեփական պետություն չունենալու և օտարների տիրապետության բացասական փորձն ունենալու իրողությամբ: Ի վերջո, պետական իշխանության կառույցները հաճախ ընկալվում են սոսկ որպես հարկահավաք-հարստահարիչ մեխանիզմի օղակներ, որոնք կարելի է շրջանցել: Այդ տրամադրությունների ձևավորմանը նպաստում են նաև նորաստեղծ պետական կառույցների հաճախակի բացթողումներն ու թերացումները, դիսֆունկցիան իրենց գործունեության ընթացքում (հովանավորչություն, կաշառակերություն, ոչ իրազեկ գործելակերպ): Տվյալ խնդիրների հաղթահարմանը մեծապես կարող է նպաստել քաղաքացիական ծառայության և պետական պաշտոնյաների կադրային քաղաքականության ինտիտուցիոնալիզացումը Հայաստանում: Այդ ուղղությամբ առաջին քայլերը սկսել են կատարվել 2001թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի ընդունմամբ, որի իրագործման գործընթացներում կարևոր է ներգրավել նաև շահագրգիռ հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և միջազգային խորհրդատու կառույցների վերահսկիչ, նաև կադրային պոտենցիալը:

Ազգային ինքնիշխանության և ժողովրդավարական արժեքների արմատավորման ներկա փուլում իրատեսական և հեռանկարային են պետության՝ իբրև հասարակական դաշինքի արդյունքում ձևավորված և որոշակի լիազորություններով օժտված կառավարման համակարգի նկատմամբ գործընկերային, ընդհանուրի բարիքին ու շահերին ծառայեցնելու տրամադրությունները: Դրա համար անհրաժեշտ է ինչպես իշխանության կառույցների արդյունավետ գործառնությունը, այնպես էլ

հասարակական կառավարման գործընթացներում քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը և դրանց գործունեության մեջ քաղաքացիական խմբերի ներգրավվածությունը: Անհրաժեշտ է ձևավորել այն գիտակցությունը (ոչ միայն իրավական ու քաղաքական իրազեկության բարձրացման, այլև համապատասխան քաղաքական մշակույթի արմատավորման ճանապարհով), որ պետությունը հասարակության կողմից ձևավորվող կառույց է և պետք է ծառայի հասարակությանը:

Եթե պետական իշխանությունների համակարգը, այս կամ այն չափով ժառանգելով Խորհրդային Հայաստանի պետականության որոշ ավանդույթներ ու մեխանիզմներ, համեմատաբար ավելի կայուն բնութագծերով է ներկայանում քաղաքական կյանքում, ապա քաղաքական կուսակցությունների դաշտն աչքի է ընկնում համեմատաբար թույլ և ամորֆ գծերով, դինամիկ, երբեմն էլ՝ դրամատիկ գործընթացներով:

Հայաստանում գործող կուսակցությունները դժվար է ներկայացնել որպես դասական իմաստով կայացած, սոցիալական լուրջ հենք ունեցող և հասարակայնորեն ներկայացուցչական ինստիտուտներ: Դա պայմանավորված է հասարակական համակարգի դեռևս անկայուն նկարագրով, այդ ոլորտում տեղի ունեցող խմորումներով, սոցիալական խավերի ու շերտերի ոչ հստակ գծագրմամբ, մասամբ նաև ազգային հոգեխառնվածքից ու մտածելակերպից բխող անհատապաշտական դիրքորոշումներով:

Քննարկվող հիմնախնդրի առումով ուշագրավ են 1995թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից առաջ կառավարությանն առնթեր Տեղեկատվության և դրա հրատարակչության վարչության հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից անցկացված փորձագետային հարցման որոշ արդյունքներ: Հարցմանը մասնակցած փորձագետների (իրավաբաններ, հասարակագետներ, քաղաքագետներ, տնտեսագետներ, քաղաքական գործիչներ) 30%-ն ազգային համաձայնությունը պատկերացնում է որպես համաձայնություն քաղաքական իշխանությունների և ընդդիմության միջև:

Հատկանշական է, որ նրանց մոտ 20%-ն էլ դրա հնարավորությունը տեսնում էր տարբեր գաղափարների ու հայացքների տեր անհատականությունների, ազդեցիկ քաղաքական գործիչների միջև համաձայնու-

թյան և համագործակցության մեջ<sup>17</sup>:

Ժամանակակից քաղաքականությունն ընդունված է ընկալել ոչ թե որպես առանձին մարդկանց, անհատների, այլ հասարակական ուժերի պայքար: Նման մոտեցումը, սակայն, ներկայիս հայ իրականության համար կարելի է պնդել որոշ վերապահումներով: Այդ են վկայում նաև պարբերաբար անցկացվող սոցիոլոգիական ուսումնասիրությունները, որոնց համաձայն՝ գործող կուսակցությունների հիմնական մասը համակիրների սակավաթիվ և ոչ կայուն խմբերից զատ չունի մշտական սոցիալական բազա: Դրանք (բացառություն չեն կազմում նաև ավանդաբար զանգվածային համարվող ու այդպիսի հավակնություններ ունեցող կոմունիստական և սոցիալիստական կողմնորոշման կուսակցությունները) կադրային, ակումբային, առանձին դեպքերում նաև խարիզմատիկ կազմակերպություններ են, որոնք ավելի շուտ մի խումբ գործիչների միավորումներ են հիշեցնում, քան սոցիալական լայն խավերի շահերն արտահայտող հասարակական ինստիտուտներ: Այնպես որ Հայաստանում քաղաքականությունն առայժմ զգալի չափով ներկայանում է որպես անհատների ու համախոհների առանձին խմբերի պայքար, քան հասարակայնորեն ձևավորված ներկայացուցչական ուժերի մրցավեճ:

Այդ հայեցակետի օգտին են խոսում նաև Հայաստանում քաղաքական իշխանությունների տարբեր մակարդակներում ընտրությունների նախաշեմին կուսակցությունների և քաղաքական ուժերի միջև ձևավորվող դաշինքներն ու խմբավորումները, որոնք ավելի շուտ դրանց առաջնորդների, ազդեցիկ քաղաքական դեմքերի միջև ժամանակավոր համաձայնության և գործողությունների կոորդինացման արդյունք են, քան գաղափարախոսական, ծրագրային մեթոդական և սոցիալական հենքի ընդհանրության վրա կայացած միություններ:

Նույն հարթության վրա պետք է դիտարկել նաև կուսակցությունների, խորհրդարանական խմբակցությունների ու պատգամավորների իրավիճակային գործելակերպը, կոնյունկտուրայի փոփոխությամբ պայմանավորված՝ «անսպասելի» շրջադարձերը գաղափարական և քաղաքական դաշտում, որոնք տեղի չէին ունենա համապատասխան հասարակական պատվերի և վերահսկողության առկայության պարագայում:

<sup>17</sup> Տե՛ս՝ Յովհաննես Յովհաննիսյան: Ազգային համաձայնութիւն. հնարավորութիւններ եւ իրողութիւններ: Դրօշակ, թիվ 12 (1556), 1999, էջ 17-18:

Քաղաքական դաշտին և կազմակերպություններին բնորոշ «անձնավորվածությունը» բնական կարելի է համարել անցումային հասարակության համար, քանզի նոր ձևավորվող կառույցներում գործառնության իներցիայի և մեխանիզմների անխափան ու ներդաշնակ գործունեության բացակայության պայմաններում չափազանց կարևորվում է անհատի դերը: Համակարգի գործունեության հաջողությունները (երբեմն էլ՝ անզամ, դրա լինելիությունը) գլխավորապես կախված են լիդերի կարողություններից, փորձից ու հմտություններից: Մինչդեռ, գործառնության հստակ մեխանիզմներ ունեցող և որոշակի իներցիայով օժտված համակարգերը հաճախ հիշեցնում են վարժ նվազախումբ, որն առանձին դեպքերում ի վիճակի է կատարել իր առաքելությունը նաև առանց դիրիժորի:

Ստացվում է մի իրավիճակ, երբ *իշխանության կառույցներին ու քաղաքական կուսակցություններին հատուկ է անձնավորվածությունը, իսկ ժողովրդական զանգվածներին՝ անդիմությունն ու անկազմակերպվածությունը:*

Այս հիմնախնդրի և դրա հետ կապված դիսֆունկցիաների հաղթահարումը պայմանավորված է սոցիալական համակարգում որոշակի նպատակներ ու շահեր հետապնդող հարաբերականորեն կայուն շերտերի և խավերի ձևավորման, դրանց համապատասխան՝ շահառու խմբերի կազմավորման և դերակատարության ակտիվացման, ինչպես նաև կուսակցություններ-ժողովուրդ կապերի ամրապնդման և, որ կարևոր է, քաղաքական համակարգի հետ հարաբերություններում փոխլրացման, զուգակշռման և վերահսկողության գործառնություններ իրականացնող *քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման գործընթացներով:*

### **3. Քաղաքացիական հասարակություն: Քաղաքական ինստիտուտների եւ հասարակական կազմակերպությունների համագործակցությունը համակարգի ներդաշնակ զարգացման ու անվտանգության տեսանկյունից**

- *Քաղաքացիական հասարակության ժամանակակից ընթացումները և ձևավորվածության չափանիշները*
- *Պետության և հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների համակարգը*
- *Քաղաքացիական կառույցների ձևավորման հաջողություններն ու հիմնախնդիրները Հայաստանում*
- *Քաղաքացիական հասարակության «միավորող» և «տարանջատող» մոդելները*

Հասարակական համակարգը սոցիալական հաստատությունների (խմբերի, կառույցների ու կազմակերպությունների) և հարաբերությունների ինքնակարգավորվող բարդ ու բազմաշերտ ամբողջություն է: Այդ համակարգի զարգացումներն անմիջականորեն կապված են ինստիտուցիոնալ կառույցների էվոլյուցիայի, ավանդական սոցիալական հաստատությունների արդիականացման ու վերափոխման, նորերի ձևավորման գործընթացների հետ:

Ժողովրդավարական ինստիտուտների շարքում անհրաժեշտ է դիտարկել օրենսդրական դաշտը, ընտրական համակարգերն ու մեխանիզմները, քաղաքացիական հասարակության կառույցներն ու հասարակական ակտիվության ձևերը (նաև ցույցեր, միտինգներ), ոչ պետական զանգվածային լրատվամիջոցների ցանցը, տնտեսական բազմակացուքաձևությունը, մարդու, ազգային փոքրամասնությունների, կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները, տիրապետող գաղափարական, արժեքային համակարգը, քաղաքական կառավարման և մասնակցության ձևերն ու մշակույթը:

Ժողովրդավարական համակարգերին բնորոշ հաստատությունների մի զգալի մասը Հայաստանում ներկայումս գտնվում է ձևավորման փուլում:

Տեղի են ունենում *ինստիտուցիոնալացման գործընթացներ, որոնց նպատակն է հասարակական վերափոխումներն ու զարգացումները դարձնել սոցիալ-կառուցվածքային տեսանկյունից կարգավորված ու նորմավորված:*

Ժողովրդավարական համակարգի ժամանակակից ընկալումները սերտորեն առնչվում են *քաղաքացիական հասարակության* գաղափարի հետ: Վերջինս նոր չէ սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական մտքի պատմության համար: Այն երկար ճանապարհ է անցել Արիստոտելից մինչև Թ.Հոբս և Ալ. Թոկվիլ:

17-րդ դարի անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը, ինչպես «հասարակական դաշինքի» այլ տեսաբաններ (Բ.Սպինոզան, Ջ.Լոկը և այլք) մարդկության պատմությունը բաժանում էին երկու փուլի՝ *բնական* (կամ մինչքաղաքացիական) և *քաղաքացիական* (կամ քաղաքական): Բնական վիճակի համար բնութագրականը հասարակական կազմակերպման ու կառավարման կարևոր գործոնի՝ պետության բացակայությունն է: Այդ շրջանում մարդիկ հարաբերվում են ոչ թե որպես նույն հանրության անդամ-քաղաքացիներ, այլ որպես կենսաբանական անհատներ («մարդը մարդուն գայլ է»): Չկարգավորված ազատությունը, տիրելու, սեփականացնելու կամքը, մրցակցությունն ու անվստահությունը առաջ են բերում բոլորի պատերազմը բոլորի դեմ: Նման պայմաններում երաշխավորված չեն մարդկանց բնական իրավունքները, արդարությունը, հավասարությունը, ազատությունը, սեփականության տնօրինումը: Որպեսզի մարդիկ կարողանան արդյունավետ աշխատել, բարելավել իրենց նյութական վիճակը՝ ազատորեն տնօրինելով սեփականությունը, կարիք ունենա պահովության անվտանգության, հուսալիության: Մշտական վտանգներն ու անապահովությունը ստիպում են մարդկանց առավել խելացիների նախաձեռնությամբ միավորվել և ստեղծել ընդհանուր պահովության կառույց՝ պետություն: Մարդիկ օտարում են իրենց բնական իրավունքների մի մասը, դրանով օժտում պետությանը՝ փոխարենը ստանալով երաշխիքներ մնացած իրավունքների ազատ և անարգել իրականացման համար: Այդպիսով նրանք ձեռք են բերում նոր՝ քաղաքացու կարգավիճակ: Քաղաքացիական կացությունն ու հասարակությունը կենսակերպի, իրավունքների տնօրինման առավել քաղաքակիրթ և երաշխավորված հնարավորություններ ընձեռող ձև է<sup>18</sup>:

<sup>18</sup> Տե՛ս՝ Гоббс Т. Сочинения в двух томах, т.2, М.,1991, էջ 93-134:

«Քաղաքացիական հասարակության» ժամանակակից ըմբռնումներն, այնուամենայնիվ, որոշակիորեն տարբերվում են հոբսայան մեկնաբանություններից: Թեպետ կարելի է նկատել էական, թեկուզեւ միջնորդավորված, աղերսներ և ծագումնաբանական որոշ ընդհանրություններ:


Քաղաքացիական հասարակության ինչպես լուսավորչական, այնպես էլ ժամանակակից ընկալումների համար *ընդհանուրը որոշակի շահեր և անօտարելի իրավունքներ ունեցող քաղաքացու` որպես հասարակական համակարգի կենտրոնական արժեքի ու միավորի վերաբերյալ պատկերացումն է*: Տարբերությունները վերաբերում են շահերի ու իրավունքների իրականացման ձևերին ու պաշտպանության մեխանիզմներին: Ժողովրդավարությունը ենթադրում է կառավարման բեռների բազմազանություն և զուգակշռություն, փոխլրացում: Պատմական փորձը վկայում է, որ միաբևեռ կառավարվող հասարակությունը, ի վերջո, սեփական համակարգի թերությունների զոհ է դառնում:

Հայտնի է, որ մեկ մխոցով աշխատող շարժիչը չի կարող կատարյալ լինել: Անհրաժեշտ է երկորդը, որը թույլ կտա բաց թողնել կուտակված գույքը, իր կողմը ձգելով լիսեռը` շարժում առաջացնել: Նմանապես, մեկ քաղաքական ուժի կողմից ղեկավարվող հասարակությունը չի կարող ազատորեն զարգանալ` ամեն քայլափոխի բախվելով հենց տվյալ համակարգի ծնունդ հանդիսացող խոչընդոտների:

Իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև բաշխելու սկզբունքը, որ գալիս է դեռևս բուրժուական հեղափոխությունների շրջանից, մեր ժամանակներում, կարծես, «լրանշակման» կարիք ունի: Քաղաքացիական հասարակության կառույցները կոչված են լինել ժողովրդավարական հասարակության զարգացման մխոցներից մեկը, իրականացնել կազմակերպչական, կարգավորող-ինտեգրատիվ, վերահսկողական և այլ ֆունկցիաներ:

Քաղաքացիական հասարակության մերօրյա ընկալումներում, բացի պետական իշխանության կառույցներից և քաղաքական կուսակցություններից, քաղաքացիների շահերի ինտեգրման և ռեալիզացման, հասարակական կառավարման առաքելությունն իրականացնող կարևոր օղակ են համարվում նաև կամավորության և շահերի ընդհանրության սկզբունքով ձևավորված *հասարակական կազմակերպությունները, որոնք ընդունված է անվանել «երրորդ սեկտոր»* (տես` սխեմա 1):

Սխեմա 1



Ընդունված պատկերացումների համաձայն, կենտրոնական և տեղական իշխանությունները, կուսակցությունները և համանման այլ խմբավորումները քաղաքական միավորներ են: Իսկ եկեղեցիները, բարեգործական ընկերությունները, ստեղծագործական միությունները և ժողովրդական այլ հավաքականությունները մտնում են քաղաքացիական հասարակության շրջանակների մեջ:

Քաղաքացիական հասարակության մեջ մտնող միավորումները հետապնդում են մարդկանց տնտեսական, ընտանեկան, իրավական, մշակութային և զանազան այլ շահեր, ստեղծվում են այդ շահերի բավարարման նպատակով: Կազմակերպությունները ձևավորվում են ոչ թե պետության, այլ քաղաքացիների նախաձեռնությամբ և նրանց կամավոր մասնակցությամբ, գոյություն ունեն և գործում են ինքնուրույն` սահմանված օրենքների շրջանակներում: Դրանք, կազմավորվելով մարդկանց տարբեր խմբերի շահերի ընդհանրության հենքի վրա, կարող են գործել ինչպես կարճ ժամանակահատվածում, այնպես էլ, առաջադրելով հեռահար նպատակներ, ունենալ տևական բնույթ` ժամանակի ընթացքում մեծացնելով իրենց ազդեցությունն ու հեղինակությունը:

Այսպիսով, «քաղաքացիական հասարակությունը»` մերօրյա մեկնաբանությամբ, ժողովրդավարության պայմաններում մարդկային հանրության

կազմակերպման և գործունեության իրականացման ձև է, որին բնորոշ է. 1. կամավորության սկզբունքով ձևավորված ոչ պետական կառույցների (միություններ, ընկերակցություններ, կազմակերպություններ) լայն ցանցը և 2. տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր, կրոնական և այլ ոչ պետական հարաբերությունների ընդգրկում համակարգը:

Քաղաքացիական հասարակության պայմաններում պետական կառավարման համակարգն ուժեղանում է հորիզոնական կապերով: Հասարակական կազմակերպություններն ապահովում և խթանում են հանրային կառավարմանն ու տեղի ունեցող գործընթացներին բնակչության քաղաքացիական մասնակցությունը՝ որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգերի կատարելագործման ճանապարհով այդ գործունեորդավելով քաղաքացիների լայն շերտեր:

Քաղաքացիական հասարակության առաջացման դրդապատճառների շարքում քաղաքագետներն ու հասարակագետներն առանձնացնում են մի շարք գործոններ:

Դրանց առաջին խումբը կապված է ժողովրդավարական երկրներում մասնավոր սեփականության ինստիտուտի և ազատ շուկայական հարաբերությունների հետ: Շուկայական տնտեսության օրենքներին դիմագրավելու, սեփականության արդյունավետ գործառնության (իսկ նման պայմաններում քաղաքացիների մի զգալի մասի համար եկամուտի աղբյուրը սեփականությունն է՝ հողը, վարձակալությամբ տրվող անշարժ գույքը, արժեթղթերը, ֆինանսական ներդրումներն ու ավանդները, ինտելեկտուալ սեփականությունը և այլն), գործունեության և շահերի իրագործման համար բարենպաստ դաշտ ապահովելու նպատակով մանր ու միջին սեփականատերերը, ծառայողներն ու տնտեսավարող սուբյեկտները միավորվում են՝ ստեղծելով ընդհանուր հետաքրքրություններ ունեցող գործարարների տարբեր միություններ ու արհեստակցական կազմակերպություններ: Արհմիությունների, ֆերմերների, արդյունաբերողների, առևտրականների, բանկիրների կազմակերպություններն ու դրանց ներկայացուցիչները մշտապես համագործակցում են կառավարության և օրենսդիր իշխանության համապատասխան հանձնաժողովների հետ՝ ձգտելով հասնել իրենց անդամների համար գործունեության առավել նպաստավոր պայմանների ձևավորմանը: Այդպիսի կազմակերպությունները քիչ չեն նաև Հայաստանում. «Արդյունաբերողների և գործարարների

միություն», «Առևտրականների միություն», «Հայաստանյան բանկերի ասոցիացիա», «Հայաստանի ֆերմերների շարժում» և այլն:

Դրդապատճառների երկրորդ խումբը կապված է տարբեր հետաքրքրություններ ունեցող հասարակական այլ շերտերի ու զանգվածների շահերի քաղաքակիրթ ներկայացման և դրանց բավարարման խնդիրների հետ: Ժողովրդավարական պետությունը կոչված է առավելագույնս բավարարել իր քաղաքացիների հետաքրքրություններն ու պահանջները: Սակայն տնտեսության և ապրելակերպի բազմակարգութան պայմաններում հասարակության մեջ շահերն այնքան բազմազան են և տարբեր, որ պետությունն ու իշխանությունները գործնականում չեն կարող իրազեկ լինել այդ ամենի մասին: Այդ շահերի միավորման, հասարակական հնչեղության, պետական ուշադրության ու հոգածության ապահովման խնդիրը ևս լուծվում է հասարակական կազմակերպությունների միջոցով:

Նման կազմակերպությունների շարքն են դասվում Հայաստանում գործող ստեղծագործական (գիտնականների, նկարիչների, թատրոնի և կինոյի գործիչների, գրողների, մարզիկների) և հայրենակցական միությունները, կանանց կազմակերպությունները, աշխատանքի և պատերազմի վետերանների միությունները, բնապահպան ընկերակցությունները և այլն:

Պետք է նկատել, որ շահերի այդպիսի բազմազանությունը, դրանց շուրջ քաղաքացիների կամավոր միավորման գործընթացն ու ակտիվ գործունեությունը հնարավոր են միայն լայն ժողովրդավարության պայմաններում: Ժողովրդավարությունը ոչ միայն քաղաքացիական կազմակերպությունները դարձնում է կենսականորեն անհրաժեշտ, այլև ստեղծում է բոլոր հիմնական պայմանները դրանց ձևավորման ու զարգացման համար: Այդ պայմանների շարքում կարելի է առանձնացնել սոցիալական ազատությունները, պետական կառավարման ժողովրդավարական ավանդույթները, քաղաքական գործունեության և բանավեճերի հասարակական ոլորտի առկայությունը, հրապարակայնությունն ու քաղաքացիների իրազեկությունը, որոնք թույլ են տալիս իրատեսորեն գնահատել իրավիճակը, նկատել հիմնախնդիրները և գործնական քայլեր ձեռնարկել դրանց լուծման ուղղությամբ: Եսպես կարևոր է նաև համապատասխան օրենսդրական դաշտի, քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության սահմանադրական երաշխիքների առկայությունը:

Քաղաքացիական կազմակերպությունների գործունեության ոլորտ-

ներն ու ուղղություններն ունեն բավական լայն ընդգրկում.

- տվյալ կազմակերպության անդամ քաղաքացիների, ձեռնարկությունների ու գործարարների շահերի և իրավունքների պաշտպանություն;
- մասնակցություն նորմատիվ ակտերի նախագծերի պատրաստմանն ու փորձագետային քննարկմանը;
- մասնակցություն պետական կառավարման օղակներում՝ ներկայացուցիչների միջոցով;
- կազմակերպության անդամների որակավորման բարձրացում՝ համապատասխան կենտրոնների հիմնադրման, խորհրդակցությունների և գործնական հանդիպումների միջոցով;
- հասարակական հսկողության իրականացում օրենսդրական ակտերի և որոշումների իրագործման նկատմամբ;
- աջակցություն մշակութային, սոցիալական, առողջապահական, բնապահպանական ծրագրերին և դրանց նախաձեռնում:

Քաղաքացիական հասարակության հիմնական ֆունկցիան հասարակության նյութական, սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարմանն ուղղված գործունեությունն է: Ըստ այդմ, երբեմն քաղաքացիական հասարակության շրջանակներում պայմանականորեն առանձնացնում են դրա 1) տնտեսական, 2) սոցիալական, 3) սոցիալ-քաղաքական և 4) հոգևոր ոլորտները:

*Տնտեսական ոլորտը* կազմում են տնտեսավարող սուբյեկտների միավորումները, ֆերմերների, արդյունաբերողների, բանկիրների, առևտրականների միությունները:

*Սոցիալ-քաղաքական ոլորտը* ներառում է հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու շարժումները, քաղաքացիների հասարակական ակտիվության տարբեր ձևերը (միտինգներ, հանրահավաքներ, ցույցեր, գործադուլներ), հասարակական ինքնակառավարման օրգաններն՝ ըստ բնակության վայրի, ոչ պետական ՁԼՄ-ները և այլն:

Տեսաբանները վիճարկում են այն հարցը, թե կարելի՞ է, արդյոք, քաղաքական կուսակցությունները ևս դասել հիշյալ ոլորտի շրջանակներում: Քանզի, եթե կուսակցությունը դառնում է իշխող, պետական կառավարման լծակներին տիրապետող, դադարում է քաղաքացիական հասարակության սուբյեկտ լինելուց: Մինչդեռ, ընդդիմադիր կուսակցությունները համապատասխանում են այդ չափանիշներին: Հետևաբար, քաղաքացի-

ական հասարակության *նեղ ընթրնման* դեպքում դրանից պետք է բացառել քաղաքական կուսակցությունները, իսկ *լայն ընթրնման* պարագայում, առանձին վերապահումներով այդ ոլորտում կարելի է դիտարկել նաև հիշյալ կառույցները:

Քաղաքացիական հասարակության *հոգևոր ոլորտը* կազմում են ստեղծագործական միությունները (գրողների, նկարիչների, քանդակագործների, կինոգործիչների, կոմպոզիտորների) գիտական և մասնագիտական ընկերությունները, եկեղեցական կազմակերպությունները և այլն:

Երբեմն այն թյուր պատկերացումն է ստեղծվում, թե քաղաքացիական հասարակության և պետության դեպքում գործ ունենք հակադիր ինստիտուտների հետ: Այդպիսի մտայնությունը, սակայն, կարող է արդարացված լինել միայն ոչ ժողովրդավարական պետությունների պարագայում: Մինչդեռ ժողովրդավարական կառավարման պարագայում քաղաքացիական հասարակությունը դառնում է անհրաժեշտություն: Հենց պետությունն է իր քաղաքացիներին օժտում լայն ազատություններով ու իրավունքներով, ազատ արտահայտվելու, սեփական շահերն իրագործելու նպատակով տարբեր կազմակերպություններ ու կառույցներ ձեւավորելու, հանուն սեփական շահերի պայքարելու իրավունքով և երաշխավորում է այդ ազատություններն ու իրավունքները: Այնպես որ քաղաքացիական հասարակությունն ու նրա խնդիրները անհրաժեշտաբար ենթադրում են ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող պետություն և ակտիվ երկխոսություն ու համագործակցություն պետական կառույցների հետ:

Իհարկե, վերջին հաշվով պետությունն է քաղաքական իշխանության սուբյեկտը, սակայն ժողովրդավարական երկրներում քաղաքացիական հասարակությունն էլ բավական ուժեղ և ազդեցիկ գործոն է, որի հետ պետությունը չի կարող հաշվի չնստել:

Հասարակական կազմակերպությունները պետությանն են դիմում տարբեր նախաձեռնություններով, առաջարկություններով ու դիտողություններով, աջակցության խնդրանքներով: Իշխանություններն էլ ուսումնասիրում են քաղաքացիական նախաձեռնությունները, աջակցում կամ մերժում, հատկացնում նյութական միջոցներ հասարակական կազմակերպությունների գործունեությանը սատարելու նպատակով:

Ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում իշխանու-



թյան կառույցներում գործում են հատուկ օղակներ, որոնք զբաղվում են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապերով, այդ ասպարեզում տարվող քաղաքականության համակարգմամբ: Դրանց ֆունկցիաները կարող են բավականին ընդգրկուն լինել՝ սկսած կազմակերպությունների գրանցումից մինչև դրանց գործունեության համար օրենսդրական և նյութական բարենպաստ պայմանների ապահովումը: Հայաստանում այդ խնդիրների կորդինացումը կատարվում է ՀՀ նախագահի խորհրդակցականի մակարդակով, որը հասարակական կազմակերպություններից բացի զբաղվում է նաև ազգային փոքրամասնությունների, մշակույթի, սպորտի և երիտասարդության հիմնահարցերով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շատ ներկայացուցիչներ ընդգրկված են կառավարությանն ու պառլամենտին կից տարբեր խորհուրդներում և համձնաժողովներում: Օրենսդիր և գործադիր իշխանություններին կից սոցիալ-տնտեսական այդպիսի խորհուրդներ են գործում Ֆրանսիայում, Ավստրիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում, Բելգիայում:

Հաճախ էլ քաղաքացիական կազմակերպությունների ներկայացուցիչներն ընդգրկվում են կառավարությունների կազմում, ընտրվում պատգամավոր: Հասարակական կազմակերպությունների և իշխանության օղակների նման «փոխներթափանցվածությունը» նպաստում է արդյունավետ երկխոսությանն ու համագործակցությանը:

Քաղաքացիական հասարակությունը «զսպումների» և «հակակշիռների» համակարգում կարևոր և գործուն լծակներից մեկն է քաղաքական իշխանության բացարձակ տիրապետության ձգտման ճանապարհին: Այդ առաքելությունն իրականացնելու համար կան որոշակի միջոցներ. ընտրական գործընթացներին և հանրաքվեներին ակտիվ մասնակցությունը, հասարակական կարծիքի ձևավորման մեծ հնարավորությունները, պետական այս կամ այն ձեռնարկումներին հակադրվելու արշավների կազմակերպումը:

Քաղաքացիական հասարակությունը կարիք ունի պետության իրավական և ֆինանսական աջակցության: Պետությունն էլ իր հերթին շահագրգռված է քաղաքացիական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Դա բացատրվում է մի շարք պատճառներով.

- նախ, քաղաքացիական հասարակությունը իշխանության լծակներին

մոտ կանգնած քաղաքական ուժի լեգիտիմության կարևոր աղբյուր է;

- քաղաքացիական կազմակերպությունների հետ շփումները հասարակության մեջ տիրող իրավիճակի, տրամադրությունների, շահերի մասին ինֆորմացիա ստանալու շահեկան ձևեր են;

- պատմական բարդ իրավիճակներում (տնտեսական ճգնաժամեր, պատերազմներ) քաղաքացիական հասարակությունը, որպես կանոն, դառնում է պետությանն օժանդակող հզոր ուժ:

- քաղաքացիական կազմակերպությունները ոչ միայն պետության ֆինանսական օգնության կարիքն ունեն, այլև կան այնպիսիները, որոնք ի վիճակի են նման օգնություն ցուցաբերել պետությանը (բանկերի ընկերակցությունները, գործարարների միությունները և այլն):

Բացի այդ, հասարակական կազմակերպությունների ինքնավար բնույթը չի բացառում երբեմն իշխանությունների համար դրանց գործողությունների անկանխատեսելի բնույթը: Ուստի, բնական են պետության ջանքերն՝ ուղղված քաղաքացիական հասարակության զարգացման վրա մասնակի «վերահսկողության» հաստատմանը՝ իշխանության տարբեր օղակներում ներկայացուցիչների ներգրավման, համատեղ կառույցների ստեղծման միջոցով:

Ժողովրդավարական ռեժիմը ենթադրում է սերտ համագործակցություն պետության և քաղաքացիական հասարակության կառույցների միջև՝ որպես քաղաքական և տնտեսական կայունության գրավական:

Քաղաքացիական հասարակության գաղափարը միանշանակ չի ընկալվում տեսաբանների կողմից: Ոմանք նկատում են, որ այն չի կարելի իդեալական հասարակություն համարել, քանի որ այդտեղ չի բացառվում թշվառության, հալածանքի կամ տգիտության գոյությունը: Սակայն եական է այն, որ թշվառներն ու հալածվածները այդպիսի հասարակության մեջ կարող են ազատորեն միավորվել, համատեղել ջանքերը և պայքարել իրենց իրավունքների համար:

Հայ իրականությանը բնորոշ ներկա պայմաններում, երբ քաղաքական դաշտին ու հաստատություններին բնորոշ է գործառնության թույլ իներցիան և «անձնավորվածությունը», իսկ ժողովրդական զանգվածներին՝ «անդիմությունը», կուսակցությունները, որոնք խնդիր ունեն ամրապնդել իրենց սոցիալական հենքը, պետք է շահագրգռված լինեն հասարակական կազմակերպությունների հետ լուրջ համագործակցությամբ: Հասարակ-

րական կազմակերպություններն էլ ունեն քաղաքական լծակների տիրապետող և քաղաքական պատվերներ իրականացնող կառույցների անհրաժեշտություն:

Ուստի կուսակցությունների և քաղաքացիական կազմակերպությունների համագործակցությամբ ու աջակցությամբ է, որ կուսակցությունները կարող են ընդլայնել իրենց սոցիալական բազան, իսկ հասարակական կազմակերպություններն ունենալ ազդեցության լծակներ քաղաքական իշխանության օղակներում: Միայն այդ ճանապարհով կարելի է հաղթահարել հայաստանյան իրականությանը բնորոշ՝ քաղաքական ինստիտուտների և հասարակության, ժողովրդի և իշխանության միջև գոյություն ունեցող անջրպետն ու բևեռացումը:


*Հասարակական համակարգի վերոհիշյալ երկու օղակների փոխադարձ աջակցության ու վերահսկողության նման մոդելը այդ համակարգի առողջացման և արդյունավետ գերծունեության կարևորագույն գրավականներից մեկն է, որը դեռևս շատ թույլ է արտահայտված հայ իրականության մեջ:*

Հասարակական համակարգում կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների առնչությունների տեսանկյունից, սակայն, անհրաժեշտ է տարբերակել քաղաքացիական հասարակության կառուցման երկու՝ «միավորող» և «տարանջատող» մոդելները:

1. «Տարանջատող» (segmentational) տիպի դեպքում քաղաքացիական հաստատություններն ունեն առավելապես դասակարգային և շերտային բնույթ, դասավորված են ըստ սոցիալական բևեռացումների ու սահմանագատումների, հաճախ ներկայանում են որպես քաղաքական կազմակերպությունների կցորդներ: Այդպիսի իրավիճակներում հասարակությունը շատ ավելի խոցելի է սոցիալական, քաղաքական ցնցումների ու դրանց «ռեզոնանսային» արձագանքների համար:

2. «Միավորող» (linked) մոդելի դեպքում քաղաքացիական հաստատություններին անդամակցում են զանազան դասակարգային և շերտային պատկանելության քաղաքացիներ: Հասարակական կազմակերպությունները դասավորված են սոցիալական շերտերին և կուսակցություններին «ուղղահայաց» սկզբունքով: Այդպիսի պայմաններում հասարակական կազմակերպությունները նպաստում են սոցիալական տարբեր շերտերի ու խավերի երկխոսությանն ու համագործակցությանը, դրանց միջև եղած

տարածայնությունների ու հակասությունների մեղմացմանը: Այս մոդելը նախընտրելի է *հասարակական համակարգի միասնականության և անվտանգության ապահովման տեսանկյունից:*



**Սխեմա 2. Քաղաքացիական հասարակության միավորող և տարանջատող մոդելները**

Ուստի պետությունը պետք է կարողանա հատուկ ուշադրություն և հոգածություն ապահովել հասարակական այնպիսի կազմակերպությունների ստեղծմանն ու զարգացմանը, որոնք հետապնդում են սոցիալական տարբեր շերտեր միավորող նպատակներ ու խնդիրներ և իրենց գործունեությամբ կարող են նպաստել նաև հասարակական տարբեր խավերի

միջև սոցիալական օտարվածության հաղթահարմանն ու համագործակցությանը:

Որպես ժողովրդավարական երկրներում քաղաքացիական հասարակության ձեւավորման չափանիշներ՝ կարելի է առանձնացնել.

- հասարակության կառուցվածքում ոչ պետական կազմակերպությունների, ընկերակցությունների տեսակարար կշիռը;
- հանրային կառավարման ու զարգացման գործընթացներում դրանց մասնակցության աստիճանը;
- հեղինակությունը և իրադարձությունների վրա ազդելու հնարավորությունները<sup>19</sup>:

Հայաստանում, պաշտոնական տվյալների համաձայն, վերագրանցված քաղաքացիական հաստատությունների թիվը հասնում է մեկուկես հազարի: Դրանք գործարարների, արդյունաբերողների, ֆերմերների, մտավորականների, կանանց, փախստականների հարցերով զբաղվող, իրավապաշտպան, բնապահպանական ու առողջապահական խնդիրներ հետապնդող կազմակերպություններ են, ստեղծագործական և հայրենակցական միություններ, հիմնադրամներ, տեղեկատվական ընկերություններ և այլն: Կան տասնամյակների փորձ ունեցող կազմակերպություններ, սակայն ճնշող մեծամասնությունը երիտասարդ, նորաստեղծ միավորումներ են: Իհարկե, ոչ բոլորի գործունեությունը կարելի է հաջողված, ժամանակի ու կյանքի պահանջներին համահունչ համարել: Սակայն քիչ չեն նաև որոշակի գործերով և հանրային կյանքում աճող դերով ու նշանակությամբ առանձնացող կազմակերպությունները: Ինչպես, օրինակ, Հայաստանյան բանկերի ընկերակցությունը, Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը, Իրավագետների և քաղաքագետների միությունը, «Ընդդեմ իրավական բռնության» հիմնադրամը, որը հայտնի է փախստականների հիմնախնդիրների լուծման գործում իր մեծ ներդրմամբ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան և այլն:

Բնականաբար, քաղաքացիական հասարակության, համապատասխան նշակույթի ու ավանդույթների ձեւավորումը մեկ կամ մի քանի տար-

<sup>19</sup> Շվեդիայում, օրինակ, յուրաքանչյուր 100 հազար բնակչին բաժին է ընկնում 2300 քաղաքացիական կազմակերպություն, իսկ նման հաստատությունների ընդհանուր թիվն այդ երկրում գերազանցում է 200 հազարը: Այդ տեսակետից Շվեդիան առաջին տեղն է գրավում աշխարհում:

վա խնդիր չէ: Հայաստանում այդ ուղղությամբ անելիքները շատ ավելի շատ են, քան կատարվածը: Դեռևս գտնված չեն իշխանություններ-հասարակական կազմակերպությունների շփումների և տևական համագործակցության առավել արդյունավետ, ազգային մտածելակերպին ու հոգեբանությանն առավել հարիր եղանակներ: Գրանցված քաղաքացիական հաստատությունների 70%-ից ավելին գործում է մայրաքաղաքում, մինչդեռ հասարակական կազմակերպությունների հոգածության կարոտ քիչ խնդիրներ չկան նաև մարզերում:

Այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ Հայաստանում քաղաքացիական հասարակության շինարարության ուղղությամբ կատարվում են առաջին, թեկուզ գոյշավոր, բայց շոշափելի քայլերը: Այդ առումով շատ կարևոր է տվյալ ուղին բռնած երկրների փորձի յուրացումը, սակայն էլ ավելի կարևոր է ոչ թե այդ փորձի ընդօրինակումը, այլ դրա մեթոդաբանական զինանոցի կոնկրետ կիրառումը ազգային առանձնահատկություններին ու հիմնախնդիրներին համապատասխան, հեռանկարային քայլերի ու ծրագրերի մշակումը:

Այս գործում կարևոր է հաշվի առնել տեղական ավանդույթներն ու հնարավորությունները: Հարյուրամյակներ շարունակ, չունենալով պետականության ինստիտուտներ, հայ հասարակությունը ինքնակազմակերպվել, գոյատևել ու զարգացել է հասարակական տարբեր կառույցների՝ եկեղեցու, բարեգործական ընկերությունների, կանանց կազմակերպությունների, հայորդաց ու պատանեկան այլ միությունների, երկրապահ կամավորական խմբերի, համայնքային ինքնակառավարման կառույցների շնորհիվ: Որոշակի վերապահումներով քաղաքացիական ինքնակառավարման հաստատությունների շարքում կարելի է դիտարկել նաև պետականության բացակայության պայմաններում ավանդական կուսակցությունների հայապահպան գործունեությունը: Ուստի, Հայաստանում քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորումը շատ ավելի ամուր հիմքեր կարող է ունենալ, եթե գործառնության մեջ դրվեն նաև այդ բնագավառում եղած ոչ ժլատ ավանդույթները:

#### 4. Քաղաքացիական ակտիվությունն ու մասնակցությունը որպես ժողովրդավարության կայացման նախապայման

- *Հասարակական իներտությունն ու քաղաքական ասպատիան՝ ժողովրդավարական բարեփոխումների ներկա փուլին բնորոշ խոչընդոտ*
- *Քաղաքացիական մասնակցության ակտիվացման ուղիները*
- *Տիրապետող արժեքային, գաղափարական համակարգերն ու հասարակական գործընթացները: Հասարակական համակարգի կայունության և անվտանգության հիմնախնդիրներ*

Ժողովրդավարության վերաբերյալ տարբեր հայեցակետերի համար առանցքային սկզբունքը, հիմնարար գաղափարը մեկն է՝ ժողովրդի առավելագույն մասնակցությունը կառավարման գործընթացներին:

Սակայն այդ մասնակցության վերաբերյալ պատկերացումները, իրականացման եղանակներն ու մոդելները տարբեր են՝ ամերիկյան, շվեդական, ֆրանսիական... Ոմանք էլ, անգամ, վկայակոչելով Հին Աթենքում ձեւավորված անմիջական ժողովրդավարության սկզբունքները, նկատում են, թե այդ ժամանակներից ի վեր ժողովրդավարությունը ետընթաց է ապրել՝ իր տեղը զիջելով ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքներին: Չհամաձայնելով այդ տեսակետին, այնուամենայնիվ, ներկայացուցչական ժողովրդավարության հիշյալ քննադատության մեջ ռացիոնալ հատիկ կարելի է նկատել: Քաղաքացու շահը անցնելով հասարակական ու քաղաքական տարբեր հաստատություններով ու կառավարման օղակներով, երբեմն կարող է սկզբունքորեն փոխակերպվել՝ վերածվելով կուսակցական, պատգամավորական խմբակցության կամ առանձին պատգամավորի շահի: Սակայն դժվար չէ նկատել, որ համեմատաբար մեծ տարածք և բնակչություն ունեցող երկրներում ներկայացուցչական ժողովրդավարությունն այլընտրանք չունի: Ուստի, խնդիրը կարող է վերաբերել հանրային կառավարման գործընթացներին քաղաքացիների առավելագույն մասնակցությունն ապահովող *կառույցների և ինստիտուտների կատարելագործմանը*: Ժողովրդավարության վերաբերյալ

տարբեր պատկերացումներն և մոդելներին ընդհանուր է մի սկզբունք և՛ հասարակական և քաղաքական գործընթացներին սոցիալական տարբեր խավերի քաղաքացիական ակտիվ մասնակցությունը:

Դրա համար անհրաժեշտ են մի կողմից՝ սոցիալական համակարգի կայուն զարգացումն ապահովող, մյուս կողմից՝ քաղաքացիական մասնակցությունը խթանող *հասարակական ինստիտուտներ* կամ, ինչպես ընդունված է ասել, *ժողովրդավարական կառույցներ ու հաստատություններ*:

Նորաստեղծ և դեռևս ձևավորվող ինստիտուտների արդյունավետ գործառնության ու զարգացման կարելուհարգույն նախապայմանը *քաղաքացիների ակտիվ դիրքորոշումն է, հասարակական գործընթացներին քաղաքացիական ակտիվ մասնակցությունը*, որն, իհարկե, վերջին հաշվով իր դրսևորումն է գտնում քաղաքական իշխանության տարբեր մակարդակներում պարբերաբար իրականացվող ընտրություններին ակտիվ մասնակցության մեջ, սակայն չի սահմանափակվում դրանով: Այլապես, դժվար է խուսափել սոսկ թվացյալ, «հեռուստատեսային» ժողովրդավարության արատավոր պրակտիկայից, երբ հասարակական գիտակցությունը ու ՋԼՄ-ները հագեցած են ժողովրդավարության գաղափարներով, սակայն իրականում դրանք չեն գործում:

Ժողովրդավարություն իրականացնելու համար օրենսդրական նորմերն ու համապատասխան իրավական դաշտն անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար: Հարկավոր են դրանց իրագործման համար անհրաժեշտ մեխանիզմներ, հասարակական վերահսկողության և քաղաքացիական մասնակցության մշակույթ: Հերակլիտը հիշեցնում է. «Ժողովուրդը պետք է պայքարի օրենքների համար այնպես, ինչպես իր քաղաքի պարիսպների համար»<sup>20</sup>: Երբ օրենքներն ունեն սոսկ դեկլարատիվ բնույթ եւ չեն գործում, եթե հասարակությունը տառապում է անօրինականությունների ախտանիշով, անիմաստ է դառնում նաեւ արտաքին սահմանների պաշտպանությունը, քանզի կառույցն արդեն ներսից քայքայված է:

Պետության եւ իշխանությունների վերաբերյալ հասարակական կարծիքի մերօրյա ընկալումներում առկա հաշտվողական-հարմարվողական և մերժողական-խուսափողական ծայրահեղ մոտեցումներն ու կարծա-

<sup>20</sup> Материалисты древней Греции. Собр. текстов Гераклита, Демокрита и Эпикура. М., 1955, т. 45:

տիպերը հաղթահարելու համար անհրաժեշտ է քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, հասարակական կառավարման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածություն: Միայն այդ դեպքում քաղաքացին կարող է պատասխանատվություն ունենալ սեփական երկրի և պետության ճակատագրի նկատմամբ: *Եվ միայն պատասխանատվության առկայության դեպքում նրա գործունեությունը կարող է լինել հասարակայնորեն արժեքավոր ու արդյունավետ:*

Հաճախ իշխող է միակողմանի և ոչ միշտ արդարացվող այն մտածելակերպը, թե ժողովրդավարացման գործընթացների ու ինստիտուտների ձեւավորման նախաձեռնողները պետք է և կարող են լինեն միայն իշխանությունները:

Ն. Բերդյաևը բավական խիստ է արտահայտվում, սակայն որոշակի ճշմարտություն կա նրա տողերում. «...պետությունն իր ծագմամբ, բնույթով և նպատակներով անենկին էլ չի շնչում և գործում ազատության, բարության, մարդկային անհատականության պաթոսով: Այն առաջնորդվում է կարգուկանոնի ուժի, հզորության, էքսպանսիայի պաթոսով: Նա ստիպված է պահպանել բարության ու արդարության նվազագույն սահմանը՝ ինքնապահպանման բնազդից դրդված»<sup>21</sup>:

Որպեսզի պետական կառույցները ծառայեն ընդհանուրի բարիքին ու շահերին, հարկավոր է հասարակական կառույցների և քաղաքացիների ակտիվ գործունեություն, հասարակական պատվեր, նաև ճնշումներ ու ներգործություն: Ներքին մղումը, հասարակական ակտիվությունն ու քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը ժողովրդավարական գործընթացների հիմնական շարժիչ ուժն են:

Հայ իրականության մեջ, սակայն դեռևս թույլ է քաղաքացիական նախաձեռնությունների ու ակտիվության գործոնը, քաղաքացիական կազմակերպությունների մասնակցությունը հանրային կառավարման գործընթացներին: Դա, ի թիվս այլ գործոնների, բացատրվում է ինչպես փորձի պակասով, այնպես էլ մեր օրերում հասարակական տարբեր խավերին բնորոշ *քաղաքական և սոցիալական իներտության* մբ:

Ամեն մի համակարգ ունի հավասարակշռվելու և պաշտպանիչ մեխանիզմներ: Բնության մեջ էլ մակընթացություններին հետևում է տեղատվու-

թյունը: Համանման օրինաչափություն կա նաև հասարակական ոլորտում: Համընդհանուր ակտիվության ու քաղաքականացվածության կամ, ինչպես ֆրանսիացի սոցիալ-հոգեբան Գ.Տարդը կասեր. «գյուտարարության» փուլին փոխարինելու է գալիս «հիասթափության» փուլը<sup>22</sup>:

Ֆրանսիացի մտածողը հասարակական գործընթացները բացատրում է ընդօրինակման սոցիալական օրենքի մեխանիզմով: Վերջինիս գործողությունը բաժանվում է որոշակի փուլերի: Առաջին փուլում «գյուտարարը» հակադրվում է պահպանողական շրջապատին և դեռևս օտարվում նրա կողմից: Երկրորդ փուլին բնորոշ է «զանգվածային գյուտարարությունը» կամ հասարակական լայն շերտերի հրապուրվածությունը տվյալ գաղափարով: Երրորդ փուլում «գյուտարարն» առաջնորդում է հասարակական շարժումը: Ի վերջո, սակայն, վրա է հասնում սկզբնական գաղափարի վերարժեքավորման, «հիասթափության» կամ իներտության փուլը: Ապա ցիկլը կրկնվում է<sup>23</sup>:

*Սկզբում հայտնվում է մեկը (կամ մարդկանց մի խումբ), որն առաջադրում է «Ղարաբաղը մերն է» կարգախոսը: Նրանից զգուշանում են, «խտհեմաբար» խուսափում: Հետո մի քանիսն էլ են տարվում այդ գաղափարով, զինվորագրվում առաջարկված կարգախոսին: Ի վերջո «վարակվում» են հասարակության լայն շերտերը: Ձեռնարկվում են քայլեր այդ գաղափարի իրականացման ուղղությամբ: Եվ քանի որ, գործունեության արդյունքում արձանագրված ձեռքբերումները (առանձին դեպքերում էլ՝ չկանխատեսված հետևանքները), որպես կանոն, տարբերվում են սկզբնական նպատակներից ու իդեալներից, վրա է հասնում հիասթափության կամ իներտության փուլը:*

Մեր հասարակության համար 1980-ական թվականների վերջին սկիզբ առած ընդհանուր քաղաքականացվածության փուլն անցել է: Նկատելի է քաղաքական գործընթացների նկատմամբ հետաքրքրության անկում և իներտություն: Դրան նպաստում են սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով մարդկանց ճնշվածությունն ու կլանվածությունը՝ հանգեցնելով կրկնակի պասիվության: Պակաս կարևոր չէ նաև հասարակայնորեն դրական արժեքավորվող գաղափարների, արժեքային համակարգերի բացա-

<sup>22</sup> Տես՝ Тард Г. Законы подражания. СПб, 1892:

<sup>23</sup> Տես՝ նաև Тард Г. Социальная логика. СПб, 1901:

<sup>21</sup> Бердяев Н. О назначений человека. М., 1993, էջ 172:

կայությունը, որի հետևանքով առաջացած վակուումը հաճախ լրացվում է աղանդավորական և նմանատիպ շարժումներով:

Տիրապետող արժեքային, գաղափարական համակարգերն ու ավանդույթները, դրանց վրա հիմնվող հասարակական կարծիքը եւս պետք է դասել հասարակական համակարգն ամբողջացնող ինստիտուտների շարքը: Այս առումով, սակայն, մեր իրականությունը չափազանց աղքատիկ է ներկայանում: Հին արժեքներն ու սովորույթները մերժվել են, իսկ նորերը դեռ չեն ձևավորվել կամ տիպականացվել:

Հատկանշական է, որ անգամ հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ հասարակական շրջանակներում չկար միանշանակ արձագանք: Գրեթե նույնն է պատկերը նաև ոճրագործությունն իրականացնողների դատավարության հասարակական և քաղաքական արձագանքներում:

Պետք է նկատել, որ քաղաքացիական ու ազգային համաձայնությունը, համագործակցությունը ձևավորվում է արժեքների, գաղափարների, նպատակների շուրջ: Եթե չկան մարդկանց ընդհանրությունը շաղախող գաղափարներ ու իդեալներ հոգեբանական, պատմական անցյալի, հասարակական արժեքների (սոցիալ-հոգեբանները կասեին նաև կոլեկտիվ կամ սոցիալական անգիտակցականի ու ենթագիտակցականի) մակարդակում, անհնար է նրանց միջև համաձայնություն մշակել:

Մահկանացուների մեջ սրբեր չկան («Ո՞վ է մարդ, որ իցե եւ ոչ մեղիցե»): Կարելի է քննադատել, անգամ, արդարացիորեն սրբերի շարքը դասված Վարդան Մամիկոնյանին, քանզի Ավարայրի դաշտում փոքրաթիվ զորքը ճակատամարտի տարավ ավելի սովոր զորաբանակի դեմ ու պարտվեց: Ռազմական արվեստի տեսակետից, իրոք որ անընդունելի տակտիկա: Սակայն մեր նախնիներն իմաստուն են գտնվել. ազգին պետք են հայրենասիրություն խորհրդանշող անհատներ, դաստիարակություն է պետք, անհրաժեշտ են սիմվոլներ, որոնց շուրջ համախմբվեն մարդիկ:

Եթե սպառված են մարդուն պայքարի մղելու նյութական լուրջ լծակներն ու խթանները, ապա կարելի է գաղափարների ու հոգևոր արժեքների դերը: Այլապես, յուրաքանչյուր ողջախոհ քաղաքացու մոտ հարց է ծագում. հանուն ինչի՞ են իր զրկանքներն ու ջանքերը: Իսկ եթե պատասխանն անձնավորված է (հանուն այսինչ պաշտոնյայի կամ գործչի բարօրության), ապա բարոյալքումն ու հասարակական կառույցների

կազմալուծումը դառնում է անխուսափելի:

Ջավեշտական այդ իրավիճակներից խուսափելու և նման միտումները շտկելու գործում մեծ է նաև հասարակական կազմակերպությունների դերը: Պետք է կարողանալ պահպանել, զարգացնել արժեքավոր ավանդույթներն ու գաղափարները, ձևավորել նորերը՝ *առաջին հերթին հարազատ միջավայրում արժեքներ փնտրելով*:

Այստեղ լուրջ խնդիրներ ունեն ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական կազմակերպություններն ու զանգվածային լրատվամիջոցները, որոնք հաճախ բաց են թողնում մերօրյա հաղթանակներն ըստ արժանվույն գնահատելու, սիմվոլիզացնելու, համապատասխան հասարակական կարծիք ու ավանդույթներ ձևավորելու հնարավորությունը: Խնդիրը կարևոր է դիտարկել ինչպես *հասարակական համակարգի ներքին փոխհամաձայնեցվածության, այնպես էլ այդ համակարգի անվտանգության հարցերի տեսանկյունից*: Քանզի, կայուն արժեքների ու գաղափարների դավանող, բարոյապես առողջ հասարակական համակարգը միայն կարող է ապահովել սեփական կառույցների ներդաշնակ ու նպատակաուղղված գործունեությունը և դիմագրավել արտաքին ազդակներին:

Ժողովրդավարական սկզբունքների իրագործումն ապահովող մերօրյա հաստատությունների շարքում կան նաև արեւմտյան իրականության մեջ վաղուց արդեն քաղաքացիություն ստացած կառույցներ, որոնց ընդօրինակումն ու յուրացումը կարևոր է նաև մեզ համար: Խոսքը վերաբերում է մասնավորապես մարդու իրավունքների, կանանց ու ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանության մեխանիզմներին:

Երբեմն հարցն անարդարացիորեն ձևակերպվում է խիստ երկընտրանքի սկզբունքով. ընդունե՞լ, թե՞ չընդունել արեւմտյան արժեքներն ու ստանդարտները: Կան արժեքներ, որոնք հարիր չեն մեր մտածելակերպին, հոգեխառնվածքին, ձեւավորված ավանդույթներին: Սակայն էլ ավելի շատ են արժեքներն ու սկզբունքները, որոնք կարելի է հասարակության առողջացման, նրա զարգացման, պետականության կառուցման տեսանկյունից:

Կարևոր է ժողովրդավարական հարուստ ավանդույթներ ունեցող երկրներում իրենց դրականորեն երաշխավորած կառույցները տեղայնացնելիս հաշվի առնել տվյալ հասարակական համակարգի ավանդական առանձնահատկությունները, հիմնական նպատակներն ու խնդիրները,

միջինաստիտուցիոնալ կապերի զարգացման և ներդաշնակ փոխգործառնության հնարավորությունները:

Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների ներկա փուլին բնորոշ խոչընդոտներից մեկն էլ *հասարակական կարծիքի ու մտածելակերպի ավանդական անհատապաշտական դիրքորոշումն է*: Ղա բացատրվում է ազգային մտածելակերպի ու հոգեխառնվածքի առանձնահատկություններով, ինչպես նաև սոցիալական ինստիտուտների ու կառույցների դեռևս ոչ բավարար ձեւավորվածության ու թերի գործառնության իրողությամբ: Բնականաբար, նոր ձևավորվող կառույցներում, երբ չկա վերջիններիս գործառնության իներցիա, կարևորվում է անհատի դերը:

Քաղաքական դաշտին ու կառույցներին բնորոշ *«անձնավորվածություն»*, իսկ ժողովրդական զանգվածներին հատուկ *«անդիմության»* և դրա հետ կապված հասարակական հարաբերությունների համակարգում առկա հիմնախնդիրները հաղթահարելու, սոցիալական տարբեր խմբերի շահերի ինտեգրման ու կառուցվածքային ներկայացման, դրանց նկատմամբ հասարակական և պետական հոգածության ապահովման առաքելությունը դրվում է հիմնականում քաղաքացիական հասարակության և ինքնակառավարման օղակների վրա:

Հասարակական-քաղաքական պասիվության հաղթահարման, քաղաքացիական ակտիվության խթանման համար, անշուշտ, կարևոր է հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների, կենսամակարդակի բարձրացման գործոնը: Այդ հիմնախնդրի լուծման հիմնական տարբերակներից մեկն էլ, սակայն, կապվում է քաղաքացիական ինստիտուտների ցանցի զարգացման, դրանց մեթոդապես հիմնավորված ու երաշխավորված գործունեության հետ: Որքան էլ պարադոքսալ հնչի, այնուամենայնիվ, իներտությունը թոթափելու հիմնական եղանակներից մեկը կրկին ակտիվությունն է: Այստեղ ևս գործում է հասարակական գործընթացներին բնորոշ վերոհիշյալ ընդօրինակման սկզբունքը:

Մասնագետները՝ կանխատեսում, իսկ քաղաքական գործիչները ակնկալում են սոցիալական ակտիվության նոր վերելք: Պատմական փորձը վկայում է, որ հասարակական նմանօրինակ շարժումներն ու գործընթացները սովորաբար ունենում են երկու դրսեւորում, երկու ընթացք՝ «էվոլյուցիոն» և «ռեւոլյուցիոն»: Առաջին տարբերակն, ինչ խոսք, նախընտրելի է:

Անընդհատ ցնցումներ ապրող հասարակությունը հեռանկար ունենալ չի կարող: Իսկ սոցիալական շարժման և փոփոխությունների ալիքը էվոլյուցիոն հունով տանելու համար անհրաժեշտ է ժողովրդավարական ինստիտուտների մի ամբողջ համակարգ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրենց հաջող գործունեությամբ կարող են ոչ միայն ոգևորել, այլև, ներգրավելով մարդկային ներուժը, որոշակիորեն ուղղորդել հասարակական զարգացումները, ապահովելով ինչպես հասարակական վերափոխումների նպատակային, կայուն ընթացքը, այնպես էլ հանրային կառավարման գործընթացներին քաղաքացիների ակտիվ մասնակցությունը:

## 5. Քաղաքական եւ քաղաքացիական երկխոսությունների համակարգը Հայաստանում

### 5.1. Ժողովուրդ-իշխանություններ երկխոսության առանձնահատկությունները

- *Կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների դերը*
- *Քաղաքական կառույցների «անձնավորվածության» ու ժողովրդական զանգվածների «անդիմության» հաղթահարման ուղիները*
- *Քաղաքական իշխանությունների լեգիտիմությունն ու իրազեկությունը կառավարման գործընթացներում Սոցիոլոգիական հետազոտություններ. ֆունկցիա և դիսֆունկցիա*

Ժողովրդավարական սկզբունքներով կառուցվող հասարակական համակարգի կարևորագույն օղակներից մեկն էլ քաղաքացիական ակտիվության և *հրապարակային բանավեճերի ոլորտի* առկայությունն է: Դա ժողովրդավարական համակարգերի արդյունավետ գործառնության ու զարգացման հիմնական երաշխիքներից է և սոցիալական, քաղաքական ազատություններից բացի, ենթադրում է նաև խոսքի ազատություն ու զանգվածային լրատվամիջոցների զարգացած համակարգ:

Հասարակական, քաղաքական երկխոսությունների ասպարեզում իր որոշիչ նշանակությամբ առանձնանում է *ժողովուրդ-իշխանություններ փոխհարաբերությունների համակարգը*: Ավանդաբար ընդունված է, որ այս երկխոսությունը սպասարկող հիմնական կառույցները պետք է լինեն քաղաքական կուսակցություններն ու այդպիսի նպատակներ հետապնդող շահառու խմբերը: Ժողովրդավարական կառավարման ժամանակակից մոդելները փոխակերպումներ են առաջ բերում նաև այս ոլորտում: Հասարակական-քաղաքական երկխոսությունների համակարգը նոր առանձնահատկություններ է ձեռք բերում՝ կապված քաղաքացիական հասարակության ինստիտուտների ցանցի ընդլայնման և հանրային կա-

ռավարման ոլորտում դրանց դերի մեծացման հետ:

Հասարակական կազմակերպությունները կոչված են կատարելու օրե-ցօր աճող շահերի բյուրեղացման ու ինտեգրման, ինչպեսև պաշտպանության և դրանց նկատմամբ հասարակության և քաղաքական իշխանության կառույցների հոգածության ապահովման խնդիրներ:

Քաղաքացիական կազմակերպություններն այն սկզբնական օղակներն են, որտեղ տեղի է ունենում սոցիալական տարբեր խմբերի հետաքրքրությունների և իրենց շահերի համար պայքարելու գործողությունների ինստիտուցիոնալիզացիան: Վերջինս թույլ կտա զգալի չափով հաղթահարել հայ իրականության մեջ ժողովուրդ-իշխանություններ երկխոսության ամենահիմնական խոչընդոտներից մեկը՝ *քաղաքական իշխանության օղակների անձնավորվածության և հասարակական շահերի կառուցվածքային, ինտեգրված ներկայացման ու պաշտպանության կառույցների բացակայության հետ կապված հիմնախնդիրները*:

Պետության վերաբերյալ քաղաքագիտական, փիլիսոփայական տարբեր հայեցակետերում քիչ տեղ չեն զբաղեցնում դրա՝ որպես ուժի, բռնության և հարկադրանքի մեխանիզմի մասին պատկերացումները: Ժողովրդավարական զարգացումներն ու գործընթացները, սակայն, հնարավորություն են ընձեռում պետության վերաբերյալ տեսակետներն ազատել որպես բռնության մեքենայի մասին միակողմանի պատկերացումներից: Այդ առումով իդեալական պետությունը պետք է ներկայանա նաև հոբսյան տրամաբանությամբ՝ որպես ընդհանուրի բարիքին ծառայող, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները երաշխավորող, նրանց բարեկեցության բարձրացմանը նպաստող կառույց:

Տվյալ չափանիշների իրագործման ճանապարհին էապես կարևոր են հանրային կառավարման գործընթացներում լայն խավերի մասնակցության ապահովումը, քաղաքական և քաղաքացիական հաստատությունների դերային, գործառնության կայացումը:

Հանրային կառավարման ժողովրդավարական սկզբունքները ենթադրում են սերտ համագործակցություն, փոխադարձ աջակցություն և վերահսկողություն պետական կառույցների և քաղաքացիական կազմակերպությունների միջև: Հասարակական կազմակերպություններում՝ պետական իշխանության կառույցների, իսկ պետական իշխանության օղակներում հասարակական կազմակերպությունների անդամների ներկայաց-



վածությունը, այդ ինստիտուտների յուրօրինակ փոխներթափանցվածությունը ժողովուրդ-իշխանություններ երկխոսության արդյունավետության կարևորագույն գրավականներից ու մեխանիզմներից մեկն է: Առանց դրա անհնար է պատկերացնել ժողովուրդ-իշխանություններ փոխհարաբերությունների կառուցողական բնույթը և հասարակական համակարգի զարգացման իրողությունները:

Ժողովուրդ-իշխանություններ փոխհարաբերության, երկխոսության արդյունավետությունն ու կառուցողականությունը մեծապես կախված են *իշխանությունների ներկայացուցչականությունից ու օրինականությունից*:

Եթե քաղաքական ու տնտեսական լծակներին տիրապետող ուժերը իշխանության են հասել ոչ օրինական ճանապարհով, տարբեր մեքենայությունների (ընտրակաշառք, ընտրակեղծիքներ, վարչական լծակների ու ռեսուրսների գործադրում) միջոցով, որն իշխանության բռնազավթման տարբերակներից մեկը կարելի է համարել, ապա նրանք չեն կարող պատասխանատվություն կրել հասարակության լայն խավերի առաջ: Նրանց շահերն ու պատասխանատվության շրջանակները շատ ավելի նեղ են՝ խմբակային, հաճախ՝ ֆինանսական: Նման դեպքերում իշխանություններն օտարվում են հասարակությունից, իսկ հասարակության մեջ տիրապետող են դառնում քաղաքական իներտությունն ու ապատիան: Արդյունքում ժողովրդի և իշխանությունների փոխհարաբերությունները կարող են դրսևորվել անվստահության և անհամաձայնության գործողությունների, քաղաքական ճնշումների, ցույցերի ու միտինգների ձևով՝ վտանգելով հասարակական համակարգի կայունությունն ու անվտանգությունը: Մինչդեռ, երբ իշխանություններն ունեն ժողովրդի վստահության քվեն, ընտրվել են հասարակական և քաղաքական կազմակերպությունների աջակցությամբ, ապա պատասխանատվություն և փոխադարձ պարտավորություններ ունեն դրանց նկատմամբ: Վերջիններս իրենց հերթին ձգտում են աջակցել ու սատարել իշխանություններին իրենց ձեռնարկումներում:

Իշխանության կառույցների և ժողովրդական զանգվածների միջև նկատվող օտարվածությունը հաղթահարելու ճանապարհը առաջին հերթին քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների հզորացման, քաղաքացիական ակտիվության և հանրային կառավարման գործընթացներում մասնակցության խթանման, ինչպես

նաև ընտրական մեխանիզմների, արարողակարգային գործընթացների կատարելագործման շնորհիվ իշխանությունների ներկայացուցչականության և լեգիտիմության ապահովումն է:

Կարևոր է նաև հանրային *կառավարման գործընթացներում իշխանությունների իրազեկությունն ու փորձառությունը*, որի պակասը նորանկախ Հայաստանի Հանրապետությունում (ինչպես նաև՝ համաման խնդիրներ ունեցող ԱՊՀ երկրներում) զգալի է:

Հայ իրականության մեջ տիրող ընդհանուր ճգնաժամի պատճառների ներկայացման ու մեկնաբանման ընթացքում թվարկվում են ամենատարբեր գործոններ. տնտեսական և ֆինանսական ռեսուրսների սղությունը, բարեփոխումների անսպասելիությունը, պատերազմական իրողությունները, շրջափակումը և այլն: Անկասկած, այդ գործոնների շարքում անհրաժեշտ է դիտարկել նաև կառավարման համակարգի դիսֆունկցիաները և դեֆիցիտը: Հայտնի է, որ անգամ նվազագույն ռեսուրսների պայմաններում մեթոդապես հիմնավորված, ճիշտ կառավարման շնորհիվ կարելի է արձանագրել շոշափելի արդյունքներ: Մինչդեռ, անգամ ծանրակշիռ ռեսուրսների պայմաններում ոչ ճիշտ, տարերային մոտեցման դեպքում ոչ միայն կարող են բացակայել արդյունքները, այլև վերջիններս կարող են լինել բացասական և անցանկալի:

Քննարկվող խնդրի լուծումն անհրաժեշտ է որոնել ինչպես քաղաքացիական ծառայության և պետական պաշտոնների ոլորտում իրականացվող քաղաքականության ինստիտուցիոնալիզացման, համապատասխան գիտակրթական ու վերապատրաստող հաստատությունների ձևավորման գործընթացներում, այնպես էլ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների «ելքի» գործառույթների, մասնավորապես՝ լիդերների պատրաստման և առաջադրման խնդիրների լիարժեք կատարման մեջ:

Այլապես, ինչպես ցույց է տալիս անցումային փուլում գտնվող երկրների փորձը, երբ առաջնորդներն ու զանգվածները գտնվում են նույն ռոմանտիզմի և սիրողական մակարդակում, երբ հանրային կառավարման գործընթացներում տիրապետող է «փորձի և սխալների» մեթոդը, բարեփոխումների հասարակական գինը երբեմն կարող է ստվերել անգամ ժողովրդավարական վերափոխումների գաղափարը:

Հասարակական, քաղաքական երկխոսությունների, ժողովուրդ-իշխանություններ կապի իրականացման, առկա տրամադրությունների վեր-

հանման, հասարակական կարծիքի արտացոլման և ձևավորման գործընթացներում անուրանալի է զանգվածային լրատվամիջոցների դերը: Վերջիններիս զարգացումը Հայաստանի երրորդ հանրապետությունում աչքի է ընկնում ոչ պակաս դրամատիկ գործընթացներով:

1992-1994թթ. տնտեսական և էներգետիկ խոր ճգնաժամը իր հետքը թողեց նաև զանգվածային լրատվության ոլորտում: 1993թ. նոյեմբեր-դեկտեմբերի տվյալներով, ժամանակակից աշխարհում ամենազանգվածային լրատվամիջոցը համարվող հեռուստատեսության ընդհանուր վիճակագրական լսարանը Հայաստանում կազմում էր ընդամենը 27% (այսինքն՝ ամեն օր հեռուստատեսության ծառայություններից օգտվելու հնարավորություն ուներ բնակչության մոտ 1/4-ը): 1994թ. օգոստոսի տվյալներն արձանագրում էին հեռուստատեսության միջին վիճակագրական լսարանի աճ՝ 10%-ով: Եվ միայն տնտեսական վիճակի փոքրիշատե շտկման արդյունքում 1998 և 1999թթ. տվյալներով հեռուստատեսության միջին վիճակագրական լսարանն արձանագրեց նորմալ ցուցանիշներ՝ տատանվելով 80%-ից 88%-ի սահմաններում<sup>24</sup>:

Ժամանակակից փուլում էլ զանգվածային լրատվության ինչպես էլեկտրոնային, այնպես էլ տպագիր միջոցները Հայաստանում ունեն ֆինանսական բազում խնդիրներ, որոնք խոչընդոտում են չորրորդ իշխանության լիարժեք գործունեությանը: Պակաս կարևոր չէ նաև գործունեության այդ ոլորտը կարգավորող մասնագիտական էթիկայի նորմերի մշակման և արմատավորման խնդիրը, որոնց բացակայության պայմաններում ՁԼՄ-ների գործունեությունը ոչ հազվադեպ վերածվում է դիսֆունկցիայի՝ առաջացնելով երկուստեք անցանկալի հետևանքներ ու հիմնախնդիրներ<sup>25</sup>:

Մեր ժամանակներում բավական տարածված են նաև զանգվածային սոցիոլոգիական հետազոտություններն ու հարցումները՝ որպես տիրող

<sup>24</sup> Տես՝ Հովհաննիսյան Հ.: Կրկին առաջատարների և ոչ միայն նրանց մասին: «TVR» հանդես, 1999, № 3-4, էջ 10: Տես՝ նաև Հովհաննիսյան Հ.: Հայկական հեռուստատեսությունն այսօր: «Լրագիր» օրաթերթ, 1994, №189, 25-ը հոկտեմբերի, էջ 3: Հեռուստատեսություն. իրողություններ, որ վկայում են ուսումնասիրությունները: «Եթեր» շաբաթաթերթ, 1999, № 16 (85), 26 ապրիլ-2 մայիս, էջ 4:

<sup>25</sup> Այդ մասին տես՝ Հովհաննիսյան Հ.: Լրագրողի մասնագիտական էթիկան որպես չորրորդ իշխանության ձևավորման կարևոր գործոն: Օրենք և իշխանություն գիտատեսական ամսագիր, հունվար-մարտ 1999, № 1 (27) էջ 24-27:

տրամադրությունների, հետաքրքրությունների ու շահերի վերաբերյալ տեղեկատվության ստացման արժեքավոր աղբյուր, ժողովուրդ-իշխանություններ երկխոսության և հակադարձ կապի մեթոդապես հիմնավորված ու արդյունավետ եղանակ:

Ժողովրդավարական կառավարման և կենսաձևի հարուստ փորձ ունեցող երկրներում զգալի տեղ է հատկացվում հասարակական կարծիքի ուսումնասիրությանն ուղղված հետազոտություններին: Դրանց առջև դրվում են ոչ միայն նկարագրական (օրինակ, թե նախագահական թեկնածուներից ո՞ւմ վարկանիշն ու հնարավորություններն են ավելի մեծ, ով որքանով է ետ մնում), այլև խորը, վերլուծական և ռազմավարական բնույթի նպատակներ ու խնդիրներ: Դրանք թույլ են տալիս ոչ միայն գնահատել տվյալ պահին ստեղծված իրավիճակը, այլև հնարավորություն են ընձեռում քաղաքական ու հասարակական կազմակերպություններին մշակել և իրականացնել հասարակական գործընթացներին ու ակնկալիքներին համապատասխան նպատակային գործելակերպ:

Քիչ չեն, սակայն սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդապես սխալ իրականացման, դրանք որպես քաղաքական քարոզչության և հասարակական կարծիքի մանիպուլյացիաների միջոց կիրառելու դեպքերը: Ի վերջո տուժում են թե՛ գիտության ու սոցիոլոգիական հետազոտությունների վարկանիշը և թե՛ հասարակությունը<sup>26</sup>:

Բավական է համեմատել 1996թ. նախագահական ընտրություններից առաջ Հայաստանում տարբեր հետազոտական կենտրոնների կողմից կատարված հարցումների տվյալները, նկատելու համար տվյալ հետազոտությունը ֆինանսավորող աղբյուրին մոտ կանգնած թեկնածուին առավել «շահեկան» պայմաններում ներկայացնելու որոշ խմբերի ջանքերը<sup>27</sup>:

«Քարոզչության» այս ձևի բացասական հետևանքներն առնվազն եռակի են. խեղաթյուրվում է հասարակական կարծիքը, ենթարկվում մեքենա-

<sup>26</sup> Հատկանշական է, որ ռուսական հետազոտական կենտրոններից մեկի տվյալներով 1994-1995թթ. ընթացքում մոսկվաբնակների շրջանում սոցիոլոգիական հարցումների արդյունքների նկատմամբ վստահությունը նվազել է 15%-ով: Փոխարենն արձանագրվել է աստղագուշակների նկատմամբ վստահության աճ՝ 6,7 %-ով: (Ըստ Ընտրությունների կանխատեսումները. արդյունքները, հիմնախնդիրները, հեռանկարները: Ընտրական համակարգեր կենտրոն: Երևան, 1998, էջ 5-6:)

<sup>27</sup> Տես՝ նույն տեղում:

յությունների: Թյուրիմացության մեջ է հայտնվում նաև պատվիրատուն՝ իր հետագա գործողությունները կազմակերպելով ոչ ճիշտ նախադրյալների հիման վրա և վերջապես, նախադրյալներ են ստեղծվում ընտրությունների ընթացքում հնարավոր խախտումների ու զեղծարարությունների արդարացման համար:

Քիչ չեն նաև սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդապես չհիմնավորված, «աչքաչափի սկզբունքով» անցկացման դեպքերը:

Տվյալ հիմնախնդիրները ժողովրդավարության զարգացած ավանդույթներ ունեցող երկրների համար անցած փուլ են համարվում: Ասել է թե՛ բավականաչափ փորձ և հիմքեր կան այդպիսի սխալներից խուսափելու համար:

1932թ. ԱՄՆ նախագահական ընտրությունների նախաշեմին «Լիտերարի դայջեստ» ամսագիրը, որը միլիոնավոր հարցաթերթիկներ էր ուղարկել ընտրողներին, հայտարարեց, որ Կանգասի նահանգապետը՝ հանրապետական Ալֆրեդ Լենդոնը, առաջիկա ընտրություններում հաղթելու է դեմոկրատ Ֆրանկլին Ռուզվելտին: Կանխատեսումն, իհարկե, չարդարացավ: Ֆ.Ռուզվելտը ջախջախիչ հաղթանակ տարավ, իսկ ձախողակ ամսագիրը դադարեցրեց գործունեությունը: Հետագայում պարզվեց, որ հարցման մասնակիցների ընտրության համար հիմք էին ծառայել հեռախոսագրքի բաժանորդների և ավտոմեքենատերերի ցուցակները: Մինչդեռ, նախագահ Ռուզվելտին պաշտպանեցին սոցիալական ավելի ցածր աստիճաններին կանգնած ամերիկացիները, որոնք չունեին ոչ հեռախոս, ոչ էլ ավտոմեքենա<sup>28</sup>:

1948թ. հասարակական կարծիքի ամերիկյան մեկնաբանները թույլ տվեցին ևս մի սխալ, կանխատեսելով, որ հանրապետական Թոմաս Դյուին կհաղթի Հարրի Տրումենին<sup>29</sup>:

Չնայած հասարակագիտության հարուստ փորձին ու ավանդույթներին, հայաստանյան ժամանակակից իրականությունը գերծ չէ նման սխալներից:

1996թ. ՀՀ նախագահական ընտրությունների վերաբերյալ կանխատեսումներն առանձին հետազոտական կենտրոններ կառուցել էին փորձա-

<sup>28</sup> Сунт Лестер Дэвид, Айрин Дэвид. Как Америка выбирает президента. В кн: Президентские выборы-1992, М., 1992, էջ 6:

<sup>29</sup> Նույն տեղում:

գիտական հարցումների հիման վրա: Այսինքն, հետազոտությունն անց էր կացվել «վերնախավային» առանձին խմբերի շրջանում<sup>30</sup>: Այնինչ, նախագահական ընտրությունները Հայաստանում տեղի են ունենում ուղղակի և ենթադրում են քաղաքացիների զանգվածային մասնակցություն:

Ուստի, կանխատեսումները շատ ավելի հիմնավոր կարող էին լինել զանգվածային հարցումների դեպքում: Բացի այդ, հայտնի է, որ քաղաքական, մշակութային և գիտական ընտրախավի մի զգալի մասը, որպես կանոն, սերտ կապեր է ունենում տվյալ շրջանի քաղաքական իշխանությունների հետ՝ վայելելով դրանց հովանավորությունը: Փորձագետային հարցումների հիման վրա հիշյալ կենտրոնները կանխատեսել էին 53-54%-ի արդյունք ՀՀ առաջին նախագահի համար: Թե որքանով իրականացան այդ կանխատեսումները, ցույց տվեցին 1996թ. սեպտեմբերի հասարակական ցնցումներն ու բախումները քաղաքական դաշտում և, իհարկե, ՀՀ առաջին նախագահի հրաժարականը 1998թ.:

Նշված խնդիրների լուծումը ենթադրում է քաղաքական և հանրային կառավարման մշակույթի զարգացմանն ուղղված ջանքեր, քաղաքական կուսակցությունների ակտիվ դիրքորոշում, ինչպես նաև հասարակական կառույցների, հատկապես՝ գիտական կազմակերպությունների ու հասարակագիտական ընկերությունների, ՁԼՄ-ների շահագրգիռ և հետևողական վերաբերմունքը այդ հարցերի նկատմամբ, հրապարակային վերլուծություններ, քննադատություն, պարզաբանումներ ու մեկնաբանություններ: Այդ ամենը մեծապես կնպաստի հասարակական համակարգի զարգացման գործընթացներում գիտական, հետազոտական կառույցների և քաղաքական ինստիտուտների օպտիմալ համագործակցությանը, սխալների ու չարաշահումների բացառմանը:

Հրապարակային բանավեճերի, հասարակական-քաղաքական ակտիվ քննարկումների ոլորտի առկայությունը ինքնին դրական իրողություն է: Այն հասարակական գիտակցությունը կարծրամտությունից պաշտպանելու, բարդ հիմնախնդիրների լուծման, հասարակական ուժերի միջև համաձայնության և համակողմանի ընդունելի որոշումների մշակման անփոխարինելի միջոց է: Սակայն մեթոդի հզորությունը դեռևս դրա բարիքի գրավական չէ: Հին հույները նկատում էին, թե վեճերի մեջ ծնվում է ճշմար-

<sup>30</sup> Ընտրությունների կանխատեսումները. արդյունքները, հիմնախնդիրները, հեռանկարները: Ընտրական համակարգեր կենտրոն: Երևան, 1998, էջ 3, 8:

տությունը, սակայն վեճերը կարող են նաև սպանել այն:

Ժողովուրդ-իշխանություն երկխոսության, հասարակական-քաղաքական քննարկումների արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է հասարակական ու քաղաքական երկխոսությունների ու բանակցությունների մշակույթի ձևավորման ընդհանուր մակարդակով, քաղաքակիրթ աշխարհում ընդունված համաձայնողական տեխնոլոգիաների կիրառման ու արմատավորման պրակտիկայով, որի պակասը ժամանակակից հայ իրականությանը բնորոշ հասարակական, քաղաքական հարաբերություններում ու բանակցային գործընթացներում մնում է բավական նկատելի:

## **5.2. Արդյունավետ բանակցությունների տեխնոլոգիաներ եւ մշակույթ**

- *Արդյունավետ հաղորդակցման սկզբունքները*
- *Անարդյունավետ հաղորդակցման տեխնոլոգիաներ*

Մեր ժամանակներում բարդ հարցերի համակողմանի քննարկումները, հասարակական-քաղաքական երկխոսություններն ու բանակցությունները, հրապարակային բանավեճերը՝ որպես դրանց լուծման, համաձայնության ուղիների մշակման մախընտրելի և ընդունված ձևեր, թափանցել են կյանքի ամենատարբեր, անգամ ավանդաբար պահպանողական համարվող բնագավառները: Զանգվածային լրատվության միջոցները հեղեղված են գաղափարական, քաղաքական, տնտեսական, իրավական ու մշակութային թեժ վիճաբանություններով, ամենաձայրահեղ տեսակետների դրսևորմանն ու բախմանը կարելի է ականատես լինել միտինգներում ու հանրահավաքներում:

Անկախ մտավոր պատրաստվածությունից, հոգեկան խառնվածքից ու հակումներից՝ հանգամանքների բերումով վիճում են բոլորը: Քչերն են, սակայն, հետևում այդ ընթացքում իրենց վարքագծին, մտածում իրենց գործելակերպի, հաղորդակցվելու եղանակների կատարելագործման, առավել արդյունավետ մեթոդների ու սկզբունքների մասին:

Մինչդեռ տարակարծություններ առաջ բերող հարցերի շուրջ համաձայնության և ընդհանուր մոտեցումների մշակման առումով էապես

կարևոր է ճիշտ հաղորդակցման, գործնական ու կառուցողական երկխոսություն վարելու սկզբունքների՝ որպես համաձայնողական գործունե տեխնոլոգիաների կիրառումը: Բազմաթիվ են այդ կանոններն ու սկզբունքները: Դրանք վերաբերում են ինչպես երկխոսության տրամաբանությանն ու կառուցվածքին, բարոյահոգեբանական, գեղագիտական կողմերին, այնպես էլ գործընթացի կազմակերպման, արարողակարգի ու վարվեցողության սկզբունքներին:

*Մտածողության որոշակիությունը, անհակասականությունը, հետևողականությունն ու հիմնավորվածությունը* նվազագույն պահանջներն են, որոնք հաղորդակցման ու փոխըմբռնման գործընթացը դարձնում են դյուրին և նպատակային:

Երկխոսությունն ու բանակցությունները արդյունավետ հունով տանելու առումով առանցքային նշանակություն ունեն նաև հետևյալ գործոնները:

1. *Կողմերի իրազեկությունը քննարկվող հիմնախնդրի շրջանակներում:* Առանց խոսակցության նյութի մեջ կողմերի իրազեկության հնարավոր չէ գործնական քննարկում սկսել: Իսկ եթե այն սկսվի էլ, կվերածվի դատարկ, առարկայազուրկ շատախոսության:

2. *Անհրաժեշտ է վիճարկվող հարցի ու դրույթի հստակ, պարզ, հասկանալի ու ոչ երկիմաստ արձանագրում և դրա շուրջ խոսակցության «ֆուկուսացվածություն»:* Այս պահանջների բավարարումը հնարավորություն է տալիս խուսափել բազմաթիվ թյուրիմացություններից, դատարկ բանակռիվներից ու իմաստակություններից: Իրողություններ, որոնք ամենևին էլ հազվադեպ չեն մեր իրականության մեջ:

3. Փոխըմբռնման, գործնական քննարկումների առումով էապես կարևոր է նաև *սեփական տեսակետն ու մոտեցումները ստույգ ձևակերպելու, ընդդիմախոսի առաջարկություններն ու փաստարկները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու պահանջը:* Հաղորդակցումն առանց փոխըմբռնման ուժերի և ժամանակի դատարկ վատնում է: Այդ առումով ուշագրավ է հին հնդիկների փորձը: Վիճաբանողը նախ վերապատմում, վերաշարադրում էր ընդդիմախոսի առարկությունը և շարունակում վեճն այն դեպքում, երբ ընդդիմախոսը հաստատում էր, որ զրուցակիցը ճիշտ է հասկացել իր ասածը: Նշված տեսանկյունից կարևորվում է զրուցակցի գործողությունների, վարքի ու արտահայտությունների իրական շարժա-

ռիթմների մեջ խորամուլիս լինելու կարողությունը, ինչը թույլ է տալիս, ավելի խոր հասկանալ ու ըմբռնել նրա դրույթներն ու դատողությունները, դիպուկ ու գործուն փաստարկներ ներկայացնել բանակցության ընթացքում:

4. Տարակարծություններ առաջ բերող հասարակական, քաղաքական խնդիրների շուրջ կայուն համաձայնություն մշակելու ծանրակշիռ սկզբունքների ու պայմանների շարքում պետք է դասել *հավասար անվտանգության՝ փոխադարձ հարգանքի, բարոյական և իրավական հավասարության ու պաշտպանվածության, սեփական տեսակետի համար չհետապնդվելու երաշխիքները*: Անհավասար պայմանները, հարկադրանքի առկայությունը, կողմերից մեկի կաշկանդվածությունը երկխոսության ընթացքում ստեղծում են թերասածության ու լարվածության (թեկուզև ներքին) մթնոլորտ և լավագույն դեպքում հանգեցնում են միայն արտաքին, թվացյալ, առերես համաձայնության, որը կարող է խախտվել իրավիճակի ցանկացած փոփոխման հետ միասին: Այդպիսի մոտեցումները պետք է հնարավորինս բացառել հասարակական և քաղաքական խնդիրների շուրջ բանակցությունների ընթացքում՝ ելնելով դրանց իսկ լուծման, տևական, կայուն համաձայնության մշակման շահերից: Փորձը վկայում է, որ պարտադրված «համաձայնությունը», որպես կանոն, ունենում է շատ ավելի անցանկալի ու վտանգավոր հետևանքներ, քան տեսակետների բացահայտ արտահայտումը, դրանց պայքարն ու մրցակցությունը:

5. Արդյունավետ բանակցություններ վարելու գրավականներից մեկն էլ *քննարկվող հիմնախնդիրը ոչ միայն սեփական շահերի և ոչ միայն ընդդիմախոսի, այլև չեզոք ու անկանխակալ տեսանկյունից վերլուծելու կարողությունն է*: Եթե երկխոսության ժամանակ կողմերից յուրաքանչյուրը երևույթներն արժեքավորում ու ներկայացնում է միայն սեփական տեսանկյունից, չփորձելով հասկանալ ու ընկալել դիմացինի տեսակետը, երբ դիրքորոշումները լինում են կոշտ ու անզիջում, ապա խնդրի կառուցողական քննարկման և երկուստեք ընդունելի լուծումներ գտնելու մասին խոսելն իսկ ավելորդ է: Այդպիսի դեպքերում չեզոքության գործոնը և տեսակետներում ընդհանուր եզրերի որոնման դաշտը ապահովում են միջնորդի դերում հանդես եկող կազմակերպություններն ու կառույցները, որոնք, բնականաբար, ունեն իրենց շահերն ու հետաքրքրությունները:

6. Երկխոսության հաջողությունը շատ բանով կախված է *մասնակիցների*

*րի տակտից և չափի զգացումից*: Ընդդիմախոսի դրույթների ճշմարտացիության հնարավորությունն ընդունելու կեցվածքը, փոխադարձ զիջողությունների պատրաստակամությունը ոչ միայն շոյում են ընդդիմախոսի ինքնասիրությունը, այլև նրան ևս դրդում մեղմելու սեփական դիրքորոշումը՝ զգալիորեն հաղթահարելով հոգեբանական արգելքները: Կառուցողական երկխոսության հիմնական պահանջներից մեկը պետք է լինի *խոսքերի, արտահայտությունների մեղմությունը և փաստարկների սկզբունքայնությունը*:

7. *Փոխադարձ հարգանքն ու հանդուրժականողությունն* արդյունավետ երկխոսության, փոխըմբռնման, խնդրի վերաբերյալ հակասական տեսակետների ըստ էության քննարկման և ընդհանուր մոտեցումների մշակման կարևորագույն գրավականներից են: Զրուցակցի և նրա գաղափարների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքն արդարացված է ինչպես մտավոր, բարոյական, իրավական, աշխարհայացքային, գաղափարական հավասարության, այնպես էլ իմացաբանական տեսանկյուններից:

8. Երկխոսությունն աշխուժացնելու, լարվածությունը լիցքաթափելու, բարդ ու խճճված իրողությունները դիպուկ բնութագրելու գործը միջոց է *հումորի և սրամտության ընձեռած հնարավորությունների* օգտագործումը: Երբեմն կատակը ծառայում է իբրև ուղեկից այնպիսի ճշմարտությունների, որոնք առանց դրա չէին ընդունվի: Ընդդիմախոսի թերություններն ու սխալները բացահայտելիս, սովորաբար, չափավոր հումորն ավելի նախընտրելի է, քան ձանձրալի մեկնաբանություններն ու քարոզները: Պետք է խուսափել, սակայն հումորը հեզմանքի ու բացահայտ ծաղրի վերածելուց: Ծաղրը անտակտության, մտքի աղքատության նշան է և, սովորաբար, գործի է դրվում, երբ չկան տրամաբանական ապացույցներ:

Արդյունավետ երկխոսություն վարելու համար փոխըմբռնմանն ու համաձայնության մշակմանը նպաստող նորմերի ու սկզբունքների իմացությունը և գործնականում դրանց կիրառումն, իհարկե, կարևորագույն պայման են: Սակայն, պակաս կարևոր չէ նաև կյանքում այդ նորմերից կատարվող շեղումների, մերօրյա հասարակական, քաղաքական բանակցությունների ու բանավեճերի ընթացքում առավել հաճախ հանդիպող *սոփեստությունների, անթույլատրելի հնարքների իմացությունն ու դրանցից խուսափելու հմտությունների մշակումը*:

Դրանց իմացությունը կարևոր է նաև տեղեկատվության անընդհատ

աճող և հակասական հոսքում կողմնորոշվելու, իրադարձությունները ճիշտ հասկանալու և գնահատելու համար:

Երբեմն երկխոսությունն ու բանակցությունները, սկսվելով մի որևիցե խնդրի քննարկումով, վերածվում են որևէ առանձին փաստարկի կամ ինչ-որ մասնավոր մտքի շուրջ մղվող վեճի: Հետո կողմերը սկսում են վիճել մի երրորդ խնդրի շուրջ: Եվ այդպես շարունակ: Պատահում է նաև այնպես, որ վիճողները դժվարանում են հիշել, թե ինչից սկսվեց վեճը:

Հասարակական, քաղաքական երկխոսությունների ընթացքում հաճախ հանդիպող սխալ և դրան համապատասխան սոփեստություն է *քննարկվող հարցի, դրույթի ականա կամ մտածված նենգափոխումը*: Դա կարող է կատարվել մասնակիորեն, կամ էլ կրել ուղղակի խափանարար բնույթ:

Օրինակ, իշխանությունները մեղադրում են տվյալ քաղաքական ուժին քրեական գործելակերպի մեջ: Վերջինս տրամաբանական մոտեցման և կառուցողական կեցվածքի պարագայում լավագույն դեպքում պետք է, որ մեղադրող կողմից ծանրակշիռ ապացույցներ պահանջեր և դրանց բացակայության դեպքում իրեն հարուցված մեղադրանքները հայտարարեր բանասարկություններ, կամ, ծայրահեղ դեպքում, փորձեր հերքել ներկայացված ապացույցները և փաստարկներ բերել իր արդարացիության օգտին: Սակայն մեղադրվող կողմը, խույս տալով ներկայացված կոնկրետ մեղադրանքներից, առաջադրում է հետևյալ դրույթը. իշխանություններն իրավունք չունեն մեղադրելու տվյալ քաղաքական կազմակերպությանը, որովհետև ընտրվել են ոչ սահմանադրական ճանապարհով: Ինչպես հաճախ է պատահում, հասարակական, քաղաքական երկխոսությունների մշակույթի չձևավորվածության պայմաններում այդպիսի հնարքները որոշակի տպավորություն են գործում հասարակական կարծիքի վրա՝ ամենևին էլ չհանգեցնելով ոչ խնդրի լուծմանը, ոչ էլ, բնականաբար, գործնական երկխոսության:

Ինչպես քաղաքականության բնագավառում, այնպես էլ հասարակական տարբեր խնդիրների շուրջ ծավալված երկխոսությունների ու բանակցությունների ընթացքում բավական հաճախ է գործածվում այսպես կոչված *ուժի փաստարկը*: Դրա դրսևորման սպեկտրը լայն է. սկսած ուղղակի սպառնալիքներից, վերջացրած անցանկալի, տհաճ հետևանքների մասին նուրբ ու անուղղակի ակնարկներով:

Այդպիսի փաստարկները հաճախ անկասելի են և գործում են բավա-

կան «համոզիչ»՝ ստիպելով ընկրկել ու առերես համաձայնության գալ: Սակայն առերես համաձայնությունը երբեմն ավելի վտանգավոր է ու պայթյունավտանգ, քան բացահայտ մրցակցությունը: Նման «համաձայնողական տեխնոլոգիաների» կիրառումը, որ ենթադրում է անհարգալից, չհանդուրժող վերաբերմունք զրուցակցի նկատմամբ և գործում է հավասար անվտանգության սկզբունքի խախտմամբ, սովորաբար տալիս է միանգամայն հակառակ արդյունք, և պետք է, ըստ ամենայնի, բացառել հասարակական, քաղաքական ցավոտ խնդիրների լուծման կապակցությամբ համաձայնության մշակման նպատակով ծայր առած երկխոսությունների ու բանակցությունների ընթացքում:

Բանակցությունների կարևորագույն բաղադրատարրերից մեկը *հոգեբանական գործոնն է, հաղորդակցման հոգեբանական տեսանկյունները*: Հասարակական ու քաղաքական տարբեր մակարդակի շփումների ընթացքում կարելի է ականատես լինել *հոգեբանական ներգործությանն ուղղված անթույլատրելի հնարքների*, որոնք ուղեկցվում են ընդունված բարոյահոգեբանական նորմերի ու սկզբունքների խախտումներով, հիմնված են մարդկային էության նուրբ կողմերի ու թուլությունների իմացության և հնուտ շահարկման վրա<sup>31</sup>:

Այդպիսի հնարքների շարքն են դասվում «*հոգու ընթերցումները*», երբ անազնիվ զրուցակիցը, մի կողմ թողնելով հակառակորդի դրույթների ու փաստարկների ըստ էության քննարկումը և «թափանցելով» նրա մտքի ու հոգու խորքերը, հրապարակում է այն «թաքնված շարժառիթները», որոնք, ըստ իրեն, ստիպում են հակառակորդին պաշտպանել տվյալ տեսակետը, պայմանավորում նրա վարքն ու գործողությունները: Օրինակ՝ «Ինքներդ էլ համոզված եք իմ իրավացիության մեջ, միայն չեք ցանկանում ընդունել Ձեր սխալը», «Այդպես եք խոսում, որովհետև Ձեզ լավ վճարել են», «Դուք պաշտպանում եք նրան, որովհետև ինքներդ էլ մասնակից եք նրա հանցագործ գործունեությանը»: Նման չհիմնավորված հայտարարությունները հաճախ շփոթեցնում են հակառակորդին և «փակում նրա բերանը»: Որպես կանոն՝ դրանք հերքելը նույնքան դժվար է, որքան ապացուցելը:

<sup>31</sup> Տես՝ Поварнин С. И., Спор. О теории и практике спора. Вопросы философии. 1990, № 3, էջ 100-107:

«Հոգու ընթերցումները» առավել հաշվենկատ ու անկասելի են դառնում, երբ զուգորդվում են ուժի փաստարկներով ու նման ակնարկներով (օրինակ, «Ձեր արտահայտությունների իմաստը պարզ է՝ վարկաբեկել ուժային նախարարություններն ու զցել դրանց հեղինակությունը»):

Էլ ավելի հաճախ «հոգու ընթերցումները» վերածվում են ուղղակի զրպարտության՝ զուգակցվելով ստի ու կեղծ փաստարկների հետ: Այդպիսի դեպքերում արդարանալու փորձ անելը սովորաբար անօգուտ է, բացի այդ, անուղղակիորեն կարող է տպավորություն ստեղծվել, որ մեղադրվող կողմը, թեկուզև տեսականորեն, հնարավոր է համարում այդ մեղադրանքների իսկությունը, իսկ դա ամենևին էլ նրա օգտին չէ: Խորհուրդ է տրվում պահանջել և պնդել, որ անազնիվ ընդդիմախոսն անհապաղ ծանրակշիռ ապացույցներ բերի իր մեղադրանքներն ապացուցելու համար: Հակառակ դեպքում կարելի է հրապարակավ մերկացնել նրա հայտարարությունների զրպարտչական էությունը՝ դրանք շուռ տալով հենց հեղինակի դեմ:

Տարակարծություններ առաջ բերող բարդ խնդիրների քննարկումների ժամանակ պետք է ձեռնպահ մնալ ու զգուշանալ նաև «շողորորօ փաստարկներից»<sup>32</sup>: Կեղծ դրույթը ներկայացվում է մշուշոտ, սուր անկյունները լծորդած տեսքով, համաձայնություն ակնկալող խորամանկ հաճոյախոսությամբ. «Անկիրթ ու չգարգացած մարդը կարող է և չհասկանալ, բայց Դուք, որպես զարգացած անձնավորություն...», «Բոլորին է հայտնի Ձեր անկողմնակալությունն ու իմաստնությունը, ուստի, կարծում եմ, Դուք կհամաձայնեք, որ...»: Այդպիսի դեպքերում, երբ ակնհայտ է ընդդիմախոսի խորամանկությունը, թերևս կարելի է հանդիմանելով զգուշացնել. «Մի փորձեք հաճոյախոսությամբ համաձայնություն շորթել»:

Կառուցողական բնույթի երկխոսությունների ընթացքում պետք է բացառել նաև թվացյալ «առավելությունների» շահարկումը, որը հազվադեպ երևույթ չէ մերօրյա բանավեճերում: Օրինակ, քաղաքական ուժերի մրցավեճում հնչում են հանդիմանություններ. «Ձեր կուսակցությունը տակավին երիտասարդ է ու անփորձ: Գործեք դեռ մի հիսուն տարի, հասեք մեր տարիքին, այն ժամանակ իրողություններն ու իրադարձություններն ավելի հստակ կպատկերացնեք»:

Երբեմն էլ, հատկապես քաղաքական բանավեճերի ժամանակ, սեփա-

<sup>32</sup> Տես՝ նույն տեղում:

կան թյուր դրույթի նպատակահարմարությունն ընդունել տալու համար այն համեմատության մեջ են դնում ավելի ծայրահեղ և անընդունելի տեսակետի հետ և առաջարկում ընտրություն կատարել այդ երկուսի միջև «կամ... կամ»-ի սկզբունքով: Ենթադրվում է, որ զրուցակիցը, մերժելով ակնհայտ անհեթեթությունը, կկանգնի սոփեստի դրույթի՝ երկու չարյաց փոքրագույնի ընդունման փաստի առաջ: Հիրավի, վատը վատթարագույնի կողքին երբեմն կարող է լավի տպավորություն թողնել<sup>33</sup>:

Շրջապատում տեղի ունեցող տարբեր երկխոսությունների և բանավեճերի ընթացքում քիչ չեն նաև մարդկային հիշողության և ուշադրության առանձնահատկությունների չարաշահման հետ կապված անթույլատրելի հնարքները, հունորի չարաշահման և այն հեզմանքի ու ծաղրի վերածման դեպքերը, որոնք պետք է բացառել կառուցողական նպատակներ հետապնդող, համաձայնողական տեխնոլոգիաների ու մեխանիզմների վրա կառուցված բանակցությունների ընթացքում:

Ներկայացված համաձայնողական տեխնոլոգիաների ու սկզբունքների գործնական կիրառումը, ինչպես նաև վիճահարույց խնդիրների լուծմանը հետամուտ երկխոսությունների, բանակցությունների ընթացքում անթույլատրելի հնարքների բացառումն ու դրանց հմուտ չեզոքացումը այն կարևոր երաշխիքներն են, որոնք հաղորդակցման գործընթացը դարձնում են դյուրին ու արդյունավետ և որտեղ երկրորդական մշանակություն է ստանում անգամ սեփական տեսակետից հրաժարվելու կամ հաղթեպարտվելու խնդիրը:

Շարադրված սկզբունքների իրագործումը հասարակական, քաղաքական երկխոսությունների մշակույթի զարգացման, կատարելագործման կարևոր պայման է: Այդ սկզբունքներով ղեկավարվելու դեպքում շահում են երկու կողմերն էլ, շահում է այն բարդ հիմնախնդիրների լուծումը, որոնց քննարկման և որոնց շուրջ համաձայնության մշակման նպատակով սկիզբ էր առել կողմերի երկխոսությունը:

<sup>33</sup> Ահա մի դրվագ հասարակական կազմակերպության ներկայացուցչի և փախստականների հարցերով զբաղվող միջին պաշտոնյայի երկխոսությունից. «Փախստականներին պետք է ըստ ամենայնի օժանդակել ու սատարել» - «Ուզում եք նրանց նվիրենք մեր բնակարանները, իսկ ինքներս փողոցներում հայտնվենք»: Առաջինը կարող է առարկել այդպիսի անհեթեթ մեկնաբանությունը. «Դուք ինձ ճիշտ չհասկացաք»: Իսկ երկրորդը կարող է շարունակել նույն ոգով. «Ուզում եք ասել, ես հիմա՞ր եմ»...

## Ամփոփում

Հասարակական համակարգի զարգացումն ու փոխակերպումները ենթադրում են ինստիտուցիոնալ կառույցների ձևավորման, ավանդական ինստիտուտների արդիականացման և վերափոխման գործընթացներ: Կարևոր է ժողովրդավարության հարուստ ավանդույթներ ունեցող երկրների փորձի յուրացումը: Սակայն՝ ոչ թե դրա պարզ կրկնօրինակումը, այլ դրա մեթոդական զինանոցի կիրառումը կոնկրետ համակարգի տեղական, ազգային առանձնահատկություններին ու հիմնախնդիրներին համապատասխան:

Փոխակերպվող համակարգի անվտանգության շահերը պահանջում են համակողմանիորեն վերլուծել ձևավորվող ինստիտուտի ոչ միայն գործառույթներն ու դրանց անխափան իրականացման հնարավորությունները, այլև հնարավոր դիսֆունկցիաների խնդիրները, հաշվի առնել ոչ միայն բացահայտ, այլև լատենտ գործառույթների հավանականությունն ու բնույթը՝ առաջին հերթին հասարակական տվյալ համակարգի այլ բաղադրիչները՝ ազգային, մշակութային, ավանդույթային, արժեքային իրողությունների հետ կապի ու հարաբերության տեսանկյունից, ցուցաբերել համալիր, համակարգային մոտեցում:

Հասարակական համակարգում ունեցած առանցքային նշանակությամբ կարևորվում է քաղաքական ինստիտուտների (պետական իշխանության կառույցներ, կուսակցություններ, շահառու խմբեր) ամբողջությունը: Հայաստանյան իրականության մեջ պետական իշխանության կառույցների նկատմամբ հասարակական կարծիքի մերօրյա ընկալումներում առանձնանում են պատմամշակութային արմատներ ունեցող ծայրահեղ մոտեցումներ ու կարծրատիպեր. հնազանդվողական-հարմարվողական և մերժողական-խուսափողական տրամադրություններ: Վերջինիս ձևավորմանը նպաստում են նաև պետական կառույցների գործունեության ընթացքում եղած բացթողումներն ու դիսֆունկցիան:

Տվյալ խնդիրների լուծումն անհրաժեշտ է որոնել հասարակական կառավարման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունն ապահովող կառույցների ու մեխանիզմների ձևավորման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության և պետական պաշտոնների ոլորտում իրականացվող կադրային քաղաքականության հստակ ինստիտուցիոնա-

լիզացման ձեռնարկումներում:

Եթե Հայաստանի երրորդ հանրապետության պետական իշխանությունների համակարգը, այս կամ այն չափով ժառանգելով Խորհրդային Հայաստանի պետականության որոշ ավանդույթներ ու մեխանիզմներ, համեմատաբար ավելի կայուն բնութագրերով է ներկայանում քաղաքական կյանքում, ապա քաղաքական կուսակցությունների դաշտն աչքի է ընկնում համեմատաբար թույլ և ամորֆ գծերով:

Հայաստանում գործող կուսակցությունները դեռևս դժվար է ներկայացնել որպես դասական իմաստով կայացած, սոցիալական լուրջ հենք ունեցող և հասարակայնորեն ներկայացուցչական ինստիտուտներ: Դրանք ավելի շատ «կարիերիստական», «ակունքային» կամ խարիզմատիկ կազմակերպություններ են: Դա պայմանավորված է հասարակական համակարգի դեռևս անկայուն նկարագրով, այդ ոլորտում տեղի ունեցող խնդրումներով, սոցիալական խավերի ու շերտերի ոչ հստակ գծագրմամբ, մասամբ նաև՝ ազգային հոգեխառնվածքից ու մտածելակերպից բխող անհատապաշտական դիրքորոշումներով:

Այս հիմնախնդրի և դրա հետ կապված դիսֆունկցիաների հաղթահարումը պայմանավորված է ինչպես սոցիալական համակարգում հարաբերականորեն կայուն շերտերի ու խավերի, դրանց համապատասխան քաղաքական կազմակերպությունների ձևավորման, այնպես էլ՝ կուսակցություններ-ժողովուրդ կապի ամրապնդման և *քաղաքացիական հասարակության ինստիտուտների* զարգացման գործընթացներով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հանրային կառավարման համակարգում հանդես են գալիս որպես «զսպումների» և «հակակշիռների» մեխանիզմի կարևոր բաղադրատարր՝ ապահովելով կառավարման բեռների բազմազանության և զուգակշռման սկզբունքը:

Պետական իշխանության կառույցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության և արդյունավետ երկխոսության գրավականը դրանց *փոխներթափանցվածությունն է, փոխադարձ ներկայացվածությունը*: Դա կողմերին տալիս է երկուստեք վերահսկման և կարգավորման լծակներ, որն, անշուշտ, կնպաստի հասարակական համակարգում առկա բեռնացումների հաղթահարմանն ու դրա արյունավետ գործառնությանը:



Հայ իրականության մեջ, որտեղ կուսակցություններն ունեն իրենց սոցիալական հենքի ամրապնդման խնդիրներ, պետք է շահագրգռված լինեն հասարակական կազմակերպությունների հետ լուրջ համագործակցությամբ: Այդ ճանապարհով է, որ կուսակցությունները կարող են ընդլայնել իրենց սոցիալական հենքը, իսկ հասարակական կազմակերպությունները ունենալ ազդեցության լծակներ՝ քաղաքական իշխանության օղակներում: Միայն այդ եղանակով կարելի է հաղթահարել հայաստանյան իրականությանը բնորոշ քաղաքական ինստիտուտների և հասարակության, ժողովրդի և իշխանությունների միջև գոյություն ունեցող օտարվածությունն ու բևեռացումը:

Հասարակական համակարգում կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների տեսանկյունից կարևոր է նախապատվությունը տալ քաղաքացիական հասարակության «միավորող» մոդելին, որտեղ քաղաքական կուսակցություններին անդամակցում են տարբեր դասակարգային և շերտային պատկանելության քաղաքացիներ: Հակառակ դեպքում, երբ հասարակական կազմակերպությունները դասավորված են ըստ սոցիալական շերտավորման, հանդես են գալիս որպես քաղաքական ուժերի կցորդ-կառույցներ, հասարակական համակարգը խոցելի է դառնում սոցիալական, քաղաքական ցնցումների և դրանց ռեզոնանսային արձագանքների համար:

Մինչդեռ, քաղաքացիական հասարակության «միավորող» մոդելը նախընտրելի է հասարակական տարբեր շերտերի և քաղաքական ուժերի միջև հակասությունների մեղմացման, *հասարակական համակարգի միասնականության և անվտանգության ապահովման տեսանկյունից:*

Ժողովրդավարական ինստիտուտների անխափան գործառնության ու զարգացման կարևորագույն նախապայմանը քաղաքացիների ու հասարակական կազմակերպությունների ակտիվ դիրքորոշումն է, քաղաքացիական ակտիվ մասնակցությունը՝ որպես լեգիտիմ իշխանություններ ձևավորելու հուսալի նախադրյալ: Որպեսզի քաղաքական կառույցները ծառայեն ընդհանուրի շահերին, հարկավոր է հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների ակտիվ գործունեություն, հասարակական պատվեր, նաև ճնշումներ և ներգործություն:

Մեր հասարակության մեջ, սակայն դեռևս թույլ է քաղաքացիական նախաձեռնությունների ու ակտիվության գործունը, բավարար չէ հանրային

կառավարմանը քաղաքացիական կազմակերպությունների մասնակցությունը: Ժողովրդավարացման գործընթացների ներկա փուլին բնորոշ խոչընդոտներից մեկը քաղաքացիների լայն շերտին հատուկ *սոցիալական-քաղաքական իներտությունն ու ապատիան է:* Դա բացատրվում է ինչպես օբյեկտիվ՝ սոցիալ - հոգեբանական գործընթացներով ու օրինաչափություններով, տնտեսական ու կենցաղային անբարենպաստ պայմաններով, այնպես էլ սուբյեկտիվ՝ հասարակայնորեն դրական արժեքավորվող գաղափարների, արժեքային համակարգերի բացակայության իրողություններով:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման և քաղաքացիական մասնակցության խթանման հիմնական տարբերակներից մեկը կրկին կապված է քաղաքացիական ինստիտուտների ցանցի զարգացման, դրանց մեթոդապես հիմնավորված ու երաշխավորված գործունեության հետ:

Ժողովրդավարական սկզբունքներով կառուցվող հասարակական համակարգի և քաղաքացիական հասարակության կարևորագույն օղակներից մեկն էլ քաղաքական ու քաղաքացիական ակտիվության և *հրապարակային բանավեճերի ոլորտի* առկայությունն է:

Հասարակական, քաղաքական երկխոսությունների ասպարեզում իր որոշիչ նշանակությամբ առանձնանում է ժողովուրդ-իշխանություններ փոխհարաբերությունների համակարգը, որը մեր ժամանակներում յուրովի է ներկայանում և նոր առանձնահատկություններ ձեռք բերելու միտումներ դրսևորում՝ կապված քաղաքացիական հասարակության ինստիտուտների ցանցի ընդլայնման և հանրային կառավարման ոլորտում դրանց դերի մեծացման հետ:

Հասարակական և պետական համակարգի արդյունավետ գործառնության և ժողովուրդ-իշխանություններ կառուցողական երկխոսության հիմնական գրավականների շարքում պետք է դիտարկել *իշխանությունների լեգիտիմությունն ու ներկայացուցչականությունը, հասարակական կառավարման գործընթացներում դրանց իրազեկությունը:* Հակառակ դեպքում քաղաքական իշխանությունը դառնում է սեփական ժողովրդի կողմից անվերահսկելի ու անկանխատեսելի՝ առաջ բերելով հասարակական համակարգի և ազգային անվտանգության խնդիրներ:

Հասարակական, քաղաքական բանակցությունների արդյունավետությունը պայմանավորված է նաև հասարակության մեջ *երկխոսություն-*

ների մշակույթի ձևավորման ընդհանուր մակարդակով, համապատասխան սկզբունքների ու ավանդույթների արմատավորման պրակտիկայով:

Հասարակական համակարգի օղակների ներքին փոխհամաձայնեցվածության, հասարակական և ազգային անվտանգության խնդիրների համատեքստում անհրաժեշտ է դիտարկել նաև *տիրապետող արժեքային, գաղափարական համակարգերի ու ավանդույթների, դրանց վրա հիմնվող հասարակական կարծիքի* առանձնահատկությունները մեր հասարակության մեջ, որոնց ձևավորման գործում լուրջ անելիքներ ունեն ինչպես քաղաքական կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Կայուն արժեքների ու գաղափարների դավանող, բարոյապես առողջ հասարակական համակարգը միայն կարող է դիմագրավել արտաքին ազդակներին, ապահովել սեփական կառույցների ներդաշնակ ու նպատակաուղղված գործունեությունը:

## Գրականություն

Ցանկում նշված են այն հրապարակումները, որոնցից մեջբերումներ են արված, կամ որոնք հիշատակված են հետազոտության տեքստում

1. Հարությունյան Էդ. Ա. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Երևան, 2000:
2. Հովհաննիսյան Հ.: Լրագրողի մասնագիտական էթիկան որպես չորրորդ իշխանության ձևավորման կարևոր գործոն: Օրենք և իշխանություն գիտատեսական ամսագիր: Հունվար-մարտ 1999, №1 (27):
3. Հովհաննիսյան Հ.: Կրկին առաջատարների և ոչ միայն նրանց մասին: «TVR» հանդես, 1999, №3-4:
4. Յովհաննիսյան Յովհ.: Ազգային համաձայնութիւն. հնարավորութիւններ եւ իրողութիւններ: Դրօշակ, թիվ 12 (1556), 1999:
5. XIX-XX-րդ դարասկզբի բուրժուական սոցիոլոգիայի պատմություն: Խմբ. Կոն Ի. Ա., Օսիպովա Ե. Վ. և ուրիշներ: Երևան 1986:
6. Ընտրությունների կանխատեսումները. արդյունքները, հիմնախնդիրները, հեռանկարները: Ընտրական համակարգեր կենտրոն: Երևան, 1998:
7. Бергер П. Л. Приглашение в социологию: гуманистическая перспектива. Перевод с англ. Под ред. Г. С. Батыгина. М., 1996.
8. Бердяев Н. О назначений человека. М., 1993.
9. Гоббс Т. Сочинения в двух томах, т.2, М., 1991.
10. Женщины в переходный период. Региональный мониторинговый доклад. Регион: Центральная и Восточная Европа и страны СНГ. № 6, Флоренция, Италия. UNICEF, 1999.
11. Кравченко А. И. Социология. М., 2001.
12. Лестер Дэвид, Айрин Дэвид. Как Америка выбирает президента. В кн: Президентские выборы-1992. М., 1992.
13. Мертон Р. Явные и латентные функции. Американская социологическая мысль. Тексты. М., 1994.
14. Материалисты древней Греции. Собр. текстов Гераклита, Демокрита и Эпикура. Общая ред. М. А. Дынника. М., 1955.
15. Поварнин С. И. Спор. О теории и практике спора. Вопросы

философии. 1990, № 3.

16. Пугачев В. П., Соловьев А. И., Введение в полотологию. М., 1998.

17. Социологический энциклопедический словарь. Ред. координатор Г. В. Осипов. М., 1998.

18. Тард Г. Законы подражания. СПб, 1892.

19. Тард Г. Социальная логика. СПб, 1901.

20. Фролов С. С. Социология. учебник 3-е изд. М., Гардарики, 2000.

21. Armand P. Sociologie de Conte. Paris, 1969.

22. Bernard J., Tompson L. F. Sociology. Nurses and their patients in a modern society. Saint Louis: The C. V. Mosby Co., 1970.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
1. Հասարակական համակարգ. կառուցվածքային և ֆունկցիոնալ բնութագիրը.....	6
2. Քաղաքական իշխանության կառույցներն ու կուսակցությունները հասարակական համակարգում .....	15
3. Քաղաքացիական հասարակություն: Քաղաքական ինստիտուտների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը համակարգի ներդաշնակ զարգացման ու անվտանգության տեսանկյունից .....	24
4. Քաղաքացիական ակտիվությունն ու մասնակցությունը որպես ժողովրդավարության կայացման նախապայման .....	38
5. Քաղաքական և քաղաքացիական երկխոսությունների համակարգը Հայաստանում	
5.1. Ժողովուրդ-իշխանություններ երկխոսության առանձնահատկությունները .....	46
5.2. Արդյունավետ բանակցությունների տեխնոլոգիաներ և մշակույթ .....	54
Ամփոփում.....	62
Գրականություն.....	67

## **«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի նմանատիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեներֆոնդի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ**

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,
- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

**ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

**բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

**գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժա-

- մանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դասակարգում,
- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,
- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,
- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

**դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,
- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,
- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,
- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,
- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,
- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,
- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,
- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի

բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտություն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատություն գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

- ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում
- բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառնությունները,
- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,
- հայկական շարունակականության հայեցակարգը,
- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,
- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,
- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որ-

պես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչումը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,
- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,
- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառնությունները,
- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,
- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,
- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,
- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Սարգսյան** - ՀՀ Վարչապետ

**Սանուկ Թովուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

**Լևոն Մկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: [noravank@arminco.com](mailto:noravank@arminco.com)